

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ .	Տէվա, Դի, Տի, Դեւ	Ս . ԵԱԶԸՃԵԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ .	Զարմանայի գործողութիւն մը . — Շան մը ոտքէն	ՀԱՅՐ
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ .	Կոջ մը բաղկին փոխադրեալ մկանունը	Ա . ԳԵՈՐԳԵԱՆ
ՆՈՐԱՎԷՊ .	Սիւրբիայէ ի Զուէցերիա փախտեան մը պատ-	Մ . ՍԱՐԸԵԱՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ .	մութիւն	ՀԱՍԿԱՔԱՂ
ԶԱՆԱԶԱՆՔ .	Աւգետնի վարդը (Ֆիւլիպիո ՕՏԸՊՈՒԱՆ)	Մ . ՉՈՊԱՆԵԱՆ
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲ . ԼՐՈՑ	Մշտնոց երգեր	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ .	Մահը յաւ կը պատճառէ	
	Արտաքին, Ներքին, Ազգային	
	Կղալիէ տը Մոնթէթէն) թարգմ.	

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ . ՊՈԼԻՍ	տարեկան	Կէս ոսկի Օսման .
»	վեցամսեայ	Քառ » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 Ղահ . արծաթ
Մէկ թերթին Գինն է	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո'րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւիք և Մասիս լրագրաց
Ղալաթիա հեղատունկեան խան

Կ . ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԳՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ԳՈՐԾԱ

Ղալաթիա, 24 Մայիս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքային	110 7/8
3 » » » (վճռահան)	110 1/2
3 » Բարիտի » (պանքային)	22 82 1/2
» » » (վճռահան)	22 90

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քոմսոյիտի

Երեկ Երեկոյ Գոց. (Միաց. D. Ս. Կ.)	48 23
Պորտային Գոցուեղէն վերջը »	48 27
Բերայի մէջ »	— —
Առաւօտուն բացուեցաւ »	48 26 1/2
Բարձրագոյն գին »	48 28
Նուազագոյն »	48 26 1/2
Կէս օրին »	48 28
Փոխաւ Վ.Թ.Ի. 1858) A. Սերի Գ. Կ. Ա. Ո. 33 20	
» 1862) »	
» 1860) B. »	49
» 1863) »	
» 1872) »	
» 1865) C. »	48 26
» 1869) »	
» 1873) »	

ԻՆԻՖՐԻԷ ԵԳԻՍՏԱՆԿԱՆ

Երեկ Երեկոյ Գոցուեցաւ »	72
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ. »	74 02 1/2
Կէս օրին »	72 02 1/2

ԲԱԺՆԵՏՈՒՄ

Սօրիթ Ժէնէրալ » Գ. Կ. Անգլ. Բ. 3 44	
Բրէտի Ժէնէրալ » » Օսմ. » 7 05	
Պանք տը Գոմս » » » 5 —	
Սոս. Դանժ Է վայտօր » » » 3 30	
Թրամուէյ » » » 280	
Բուսէլիի երկաթուղի » Ֆր. 43 75	
Օպլիկատիոն տը Բրիտիթ » —	
Բաժնեթուղթ Լաւրիովի » 60	

ԸՆԲԱՅՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի » զրշ. » 400	
20 Ֆրանկոն » » 87 22	
Անգլիական ոսկի » » 110 44	
Բոլ Խմբերալ » » 90 8	
Քրիմի » » 51 45	
Բուսէլի Թղթադրամ » » 8 86	
» արծաթ » » 89 30	
Ֆիորին » » 9 —	
Մէք. արծ. (տարբ.) » » 408	

Վեցնոց » » 403	
Հինգնոց » » 402 35	
Մէթալիք » » 98 20	
Պղինձ » » —	
Թղթադրամ » » —	

ԵՐԵՐԿԱԿԱՆ ԳՈՐԾԱ

Երեւան, 4 Յունիս, ժամ 5 վայր. 15 Երեկոյ

Անգլ. քոմսոյիտէ	99 9/16
Օսմ. » Սերի Գ. բացուեցաւ	131 5/16
» » » Գոցուեցաւ	17 1/16
» » » Ա. »	33 1/2
» » » Բ. »	49 1/4
» » » Գ. »	17 1/8
Օթոման 1874 »	67 1/4
Փոխաւու թիւն 1877 »	80
Պանք Օթոման »	14 1/4
Բուսական փոխաւ. 1873 »	93 1/2
Երեկոյան միացեալ (Իւնիֆիէ) »	64 1/2
» առանձն. (Երեկոյէթիէ) »	86 1/4
Տայրա Սանիէ »	61 5/4
Տոմանիալ (Փոխաւ. Բոչիլտ) »	83 5/4
Հուսգարական պարտաթուղթ 40/0 »	—
Փոխանակութիւն Բարիդի վրայ »	—

Վեցնոց, 4 Յունիս, ժամ 4 Երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ »	— —
Օսմանեան երկաթուղի »	— —
Բարիլ 4 Յունիս, ժամ 3 վայր. 45 Երեկոյ	
Երանական Ռանիթ 4 1/2 0/0 »	109 95
» » 3 0/0 »	82
Օսմանեան քոմսոյիտէ Սերի Գ. բացուեցաւ	17 40
» » » Գոցուեցաւ »	17 40
» » Սերի Բ. »	18 50
» » Գ. »	17
Օսմանեան երկաթուղի »	43 25
» Բէթիի բաժնեթուղթ »	—
Պանք Օթոման »	560
Գրէտի Լիոնէ »	540
» Ֆոնսիէ »	1360
Բաժնետոմս Լիոնի »	1260
Բուէզի ջրանցք »	2127
Բուսական 5 0/0 1877 »	99 1/4
Խալալական Ռանիթ »	96 95
Երեկոյան միացեալ »	326 25
Սպանիական (արտաքին) »	59 7/8
Բրիտիթ Երեւան »	390
50/0 Հեղինական »	340
Չէք Լոնտրայի վրայ »	25 20

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34րդ ՏԱՐԻ

1885 ՄԱՅԻՍ 25

ԹԻԻ 3771

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 25 ՄԱՅԻՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՎԱ, ԴԻ, ՏԻ, ԴԵԻ

(Շար. և վերջ)

Յիշատակած տողերուն աւելի կարեւոր պատմական հետեւանքն է գիտել, որ այդ քրմութիւնը կամ քահանայական իշխանութիւնը իրեն կրօնական բնութեանը հետ ունէր նաեւ զինուորական յատկութիւն, նման թերեւս հին Գերմանիոյ Տրուհաներու իշխանութիւն մը զինուորական իրեն յատկացեալ վիճակին մէջ, եւ կամ մեհենի պատկանեալ սրբազան հողին վրայ: Զինուորութիւն, որ պատրաստական ունի հեծեալ ու հետեւակ զօրք, դրօշներ, նշաններ, հրաման ալդիդ ժողեր, կազմութիւն գնդի, սուին տէգ ու միտնդ ունող յառաջընթաց ձիաւորներ. ունի զրահ, վահան, աղեղն, նետ, պարսատիք. բայց ոչ սուրի եւ ոչ սաղաւարտի դործածութիւն յիշուած չկայ քրմաց պատերազմներու մէջ: Ինչպէս կ'երեւի, այդ կրօնական մարդիկ վարժ էին զինուորութեան ու հեծելութեան մէջ, մինչեւ յանդգնիլ արքունի զօրաց դէմ ելնելու: Յայտնի է թէ յանպատրաստի առձեռն ունեցած զօրքով չէին կարող նորա կանոնաւոր զինուորութեան դէմ տոկալ: Կրօնական բուռն նախանձ, եւ սրբազան երկիրն եւ պաշտած աստուածքն պաշտպանելու համար էր իրենց ցուցած ճիգն:

Ինչպէս վերոյիշեալ Ազաթանդեղոսի խօսքերուն մէջ տեսնուեցաւ, աւելի՛ Անահայ մեհենաց քուրմերն էին յատկապէս որ զի-

նուորական զէնքերու ցոյց տուին. իսկ ա՛յլ մեհենաց քուրմերը քարերով ու աղաղակներով իրենց ընդդիմութիւններն ըրին: Զինուորական պաշտպանութիւնը Անահայ մեհենաց ազատագրութեան կրնար համարուիլ ինչպէս գլխաւոր աստուածութիւն երկրին՝ եթէ Իննակնեան տեղւոյ վրայ ալ, ուր Անահիտ չ'կայր, նոյնալիս զինուորական դիմադրութիւն չ'տեսնէինք: Բնական կ'երեւի ուրեմն որ, ուր գլխաւոր մեհեան մը շատ զօրացած էր բազմազանձ հարստութեամբ, դիւաց բազմութեամբ, եւ ընծայական երկրին ընդարձակութեամբ՝ որ մէջի գիւղերով ու աւաններով ընդարձակ սեփականութիւն մը դարձած կ'ըլլար մեհենին, զինուորական ապահովութիւնն ալ հարկաւոր էր:

Տարօնի մեհենաց կործանման ատեն քահանայութիւնը շատ աւելի ոյժ երեւցուց թէ՛ թուով, թէ՛ իրեն հաւատարիմ դաստակերտներէն ընդունած օգնութեամբ, եւ թէ՛ այն բարոյական ուժով որ արքունի զօրաց մէջ գտաւ իրեն համախոհ: Բանակին գլուխը կը զօրավարէին Արձան Գիսանեայ քրմապետը, Դեմետ, Ակնեայ քրմապետը, եւ Մետասկէս՝ Յալտիչատի քրմապետը: Այս պատերազմները բոլորովին կրօնական էին՝ ազատ ամեն քաղաքական կերպարանքէ:

Այս ետքի բանքս կրնան բացատրութիւն ըլլալ Բուզանդէ (Զ. Բ.) պատմուած այն անսովոր կարգաւորութեան, զոր Զաւէն եպիսկոպոսապետ Հայոց ուղեց մուծանել եկեղեցական կարգաց մէջ: Զաւէն հին քուրմերու ցեղէն էր, եւ էր զաւակ Աղբիանոսի որ քրմութենէ քրիստոնեայ դառնալով Մանազկերտի եպիսկոպոս ձեռնադրեցաւ Ս. Լուսաւորչէ:

Արդէն Բուզանդէ (Գ. Ժգ.) շատ տխուր

դոյներով կը նկարագրէ խորով Բ. Ի եւ նորա յաջորդաց ժամանակի Հայոց աշխարհին քրիստոնէութեան պատկերը . ըսելով է որ թէպէտ եւ քրիստոնէայ դարձած էին, բայց բռնի ունէին այդ կրօնքը . և զի հին հեթանոսութեան սովորոյթքն ու երգերը իրենց սիրելի էին : — Կարելի չ'է, որ հին քրմութեան թոյլ վարուց՝ շլացուցիչ փառաւորութեան՝ եւ հեշտական վիպասանութեանց մէջ սնունդ առած աշխարհի սերունդ մը սակաւ ժամանակի մէջ մոռնայ իւր անցեալ կենաց դիւրութիւնքն, ու կատարեալ կերպով դառնայ քրիստոնէի աշխարհութեանց կենաքի, եւ ինքզինքն դնէ ճգնաւորական ձեւի եւ վարդապետութեան տակ երեւցող քրիստոնէայ առաջնորդներու ձեռքին տակը : Այսպիսի վիճակի հանդամանք, յորում նեղեալ էին կարգ մի մարդ իկ' թագաւորացունք բազմաթիւ իշխանացունք եւ տիկնայք՝ եղան պատճառ Չաւէնը Հայոց մեծ հայրապետութեան ամօրը կոչելու :

Այս Չաւէն ժամանակին ողբովը լցուած մարդ՝ հայրենի քրմութեան յիշատակները իւր մտաց մէջ դեռ կենդանի եւ քաղցր, եւ քրմութիւնն որ Հայոց աշխարհին զանազան կողմերուն վրայ դեռ կայուն էր՝ իւր սքանչելի ընթերցումքն ու երգերով, յօժարեցուցած ըլլան զինքն, հին քրմութեան նման՝ զինուորական ձեւի մէջ դնել քրիստոնէայ եկեղեցւոյ քահանայութիւնը . որոց համար կ'ըսէ պատմիչը . « Չաւէն այս անուանի զաւակ Աղբիւնոս եպիսկոպոսի Մանազեւոյ, կրօնս (սովորութիւն) մի եղ յիւրում ժամանակի, զի ամենայն քահանայից ուսոյց առնել հանդերձս զինուորացի թողին զկրօնս առաքելական եկեղեցեացն, և սկսան գնալ ըստ իւրեանց մտաց . զի ոչ ըստ կրօնիցն ազանէին քահանայքն զսոսկի նաւորն, այլ սկսան զխոտորկութան ի վերայ ծնդացն ունել եւ զարգարէին զհանդերձս իւրեանց պէս զէս նարօտօք ևն. (Բուզ. Զ. բ.) : » Այս զինուորական ձեւին տակը երեք չորս տարի հայրապետութիւն ըրաւ Չաւէն : Իրեն նման եւ Շահակ գովելի եպիսկոպոս, որ եւ սա էր « յազգէ եւ ի ժառանգութենէ Աղբիւնոսի », Զաւենի դրած կարգը չ'իյնեց : Ասոր ալ յաջորդող Ասպուրակէս, որ Աղբիւնոս եպիսկոպոսի զաւակներէն էր եւ ազգական Զա-

ւենի ու Շահակայ, Հայոց հայրապետ եղաւ եւ զինուորութեան զգեստով կեցաւ ինքն եւ կղերն : — Զուարճալի չ'է՞ Հայոց եպիսկոպոսապետները զինուորական հագուստի մէջ տեսնելը . . . Չ'կայ երեւելի պատճառ, որ քրմութենէ առաջ եկած այս երեք անձինք քրիստոնէայ եկեղեցականի երկայն պարէզօտը թողուն, եւ զինուորութեան ձեւի մէջ դնել ուզեն կղերը, եւ իրենք ալ հեշտութիւն զգան նոյն ձեւի մէջ երեւնալու : Կը ոչ ալ այս բանս անոնց աշխարհասիրութեան եւ թեթեւ մտածութեան գրելի է . զի ուրիշ կողմանէ շատ փայլուն ու քրիստոնավայել գովեստներ ընդունած են պատմիչէ, մանաւանդ Ասպուրակէս . հապա կրնաք համարիլ որ իրենց ազգին ու հնութեան յիշեցուցիչ ըլլալու համար էր որ իրենց սիրելի կ'ընէր զինուորական տարազը : Քրիստոնէութեան անուան եւ օծութեան տակը հեծող հին քրմութիւնը հազիւ տասուերկու տարի վայելց իւր նախնեաց յիշեցուցիչ տարազը, եւ Ս. Սահակ հայրապետին ամօրակալելովը չ'իջաւ :

Կերեւի թէ հին քրմութիւնը ազատ եւ ինքնիշխան էին իրենց վիճակին մէջ եւ կամ մեհենի պատկանեալ սրբազան հոգին վրայ ինչպէս էին Կապադովկիոյ մէջ Կոմանայի՝ Միրիմենայի եւ Զելայի քահանայական վիճակները, որոց մէջ մէկ քանի հազարաւոր էր քրմաց եւ քրմահեաց թիւը : Այդ քահանայական եւ սրբազան տեղիքն ազատ էին արքունի հարկէ եւ կանոնաւոր տուրքերէ . վիճակին կանոնաւոր հասցիքը մեհենի կացութեան կապուած էր, եւ այն տեղի մարդ իկը՝ հազարաւորները՝ կը վայելին անտի ձրի թոշակ . դարձեալ արտաքինը որ մեհենի կը ծառայէին, եւ ուխտաւորը որ աշխարհատօն օրերուն հոն կը դիմէին, մեհենէ կը կերակրէին : Նոյն օրէնք եւ սովորութիւնք ըստ մասին անցան քրմոստոնէից . մեհենի հոգերն ու հասցիք վանքերու սեփականութիւն դարձան . բսել է որ հին քրմութեան լցնալովն ուստիները փոխուեցան : Հին կարգադրութիւնք, թէպէտ փոքրութեամբ, անխախտ կը պահուին Հայոց վանական վիճակներուն մէջ : — Այսպէս կ'աւանդ են՝ Զենոբ, Ազաթանդեղ Բուզանդ :

Ի հաւաքումն այս դրուածիս՝ սա եղրա -

կացութեան եկած կ'երեւիմ դիտել տալով նախ, որ մեր Դեւ բառը բացի սովորական նշանակութենէն՝ ըսել է նաեւ վետայեան մեհենի քահանայ քուրմ եւ պաշտօնեայ. ո՛ր նշանակութիւնը բառադրոց կարգին մէջ որոշեցի: — Բ. Մեր մեհենաց մէջի պաշտամունք վետայեան արարողութեամբ սկըսած են, չասեմ որ ժամանակ, եւ շարունակ մնացած մինչեւ ց'կէս հինգերորդ դարու: — Գ. Զի, վետայեան պաշտամունք եւ արարողութիւնը մուծեալ են ի ձեռն ազգաւ հնդկի քահանաներու՝ իրենց լեզուով ու գրքերով: — Դ. Զի, Հայաստանի մէջ քահանայութիւնը կամ քահանայական իշխանութիւնը իւր առանձնութիւնն ունէր մեհենի ազատ վիճակին մէջ. եւ կրօնական յատկութեան հետ ունէր նաեւ զինուորական կերպարան: Բայց թէ արդեօք ամեն մեհենաց քրմապետութիւնը մի մեծ իշխանաւոր քուրմի հրամանատարութեան տակը կարգած էին, եւ կամ թէ գլխաւոր մեհենաց քրմապետները զատ զատ եւ իւրաքանչեւ անկախ էին՝ յայտնի չէ: Կ'երեւի որ արքայազուն քրմապետ մը գերմութիւնն կը ներկայացունէր առ արքայի (Նոր): Նոյն սովորութիւնն քրմատոնէութեան ժամանակ:

Մեր պատմութեանց մէջ ազգին հին կացութեան վրայ մանր պարագաներու յիշատակութիւնը յոյժ սակաւ ըլլալով, լեզուի քննութեամբ միայն կարելի պիտի ըլլայ ինչ ինչ պիտանի յայտնութիւններ ընելու. ուստի ներուի ինձ, եթէ բառից խորհրդուն մէջ թաղուն կեցած պատմական պարագային ի յայտ բերելու համար երկմիտ բառից մեկնութեանց վրայ խօսքը երկարելու պէտք ունենամ: Յայտնի է որ այդ տեսակ բառաքննական գրութեամբ ամեն մարդու հաճելի չեն կրնար ըլլար, զի զուրկ է անոնց շուրջալի մասը եւ միտք սխրացունող պատրիշ գեղ: Բնական է որ գրող մարդը իւր մտաց առջեւը առարկայ մի կ'ունենայ՝ մարդ կամ դաս մի մարդկան, առ որս գըրջով կը խօսի. այսպիսի գրութեամբ առարկայն չ'կրնար լինել թերուս կամ ազգային հնութեան սակաւատենչ մարդ, եւ կամ անոնք որ զուարճալեաց աւելի սիրող են. կը խօսի ընդհանրական առ այն սակաւաւոր անձինք, որք զուարճալիքէն դուրս, նաեւ ազգային հին յիշատակաց ցանկացող են:

ՍՏԵՓՈՆՈՍ ԵԱԶԸՃԵԱՆ

Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

ՇԱՆ ՄԸ ՈՏՔԷՆ ԿՆՈՋ ՄԸ ԲԱԶԿԻՆ
ՓՈԽԱԴՐԵԱԼ ՄԿԱՆՈՒՆՔ

ՆԻԻ-ԵՈՐԲ, 15 մայիս

Հետեւեալ վիրաբուժական զարմանալի գործողութիւնը, որ յաջողութեամբ կատարուեցաւ քաղաքիս Պէլ-Վիւ հիւանդանոցին մէջ, թարգմանելով Հերալտէ եւ Թրէպէնէ, կը ներկայացնենք Մասի ընթերցողաց, թողով իւրաքանչիւր ընթերցողի իրեն համար դատել՝ թէ բժշկութիւնը ո՛րչափ յառաջդիմութիւն ըրած է մինչեւ ցայս վայր:

Պէլ-Վիւ հիւանդանոցի բժիշկները ճիշդ այժմ պիտար կը շնորհաւորեն « մկանունք պատուաստելու » նշանաւոր գործողութեան մը յաջող հետեւանաց համար, որ առաջինն է այս երկրին մէջ: Գործողութիւնը կը բաղկանայ չունէ կամ ուրիշ կենդանիէ մը մաս մը մկանունք փոխադրելու մէջ մարդկային կազմութեան որ եւ է մէկ անդամին վրայ որ անկարող եղած է իւր պաշտօնը կատարել՝ այդպիսի մկանանց պահասութենէն:

Նրկու ամիս առաջ, Աննի Բէննէլ, քսան եւ վեց տարեկան աղջիկ մը, Պէլ-Վիւ հիւանդանոցը տարուեցաւ իւր բազկին վրայ գտնուող մէկ վէրքը դարմանելու համար: Ինքը լուացարար մ'էր եւ յորժամ կը գործէր, իւր ձախ ձեռքը շողոյ մեծ ձախարակի գործիքի մը մէջ բռնուեցաւ, եւ մինչեւ որ գործիքը կեցուցին, իւր բազկին ստորին կողման մկանանց մէկ մեծ մասը բաժնուեցաւ ոսկորէն, զայն բոլորովին մերկացնելով:

Վէրքը զօրաւոր էր եւ առատ արիւն հոսեցաւ: Զինքը դարմանող բժիշկը կարծեց թէ անդամահատութեան պէտք պիտի ըլլար: Սակայն եւ այնպէս ասոր պէտք չեղաւ, քանզի մեղմացուցիչ երկար դարմանելէ յետոյ վէրքը բժշկուեցաւ: Ոսկորէն բաժնուած ամբողջ միսը վերստին տեղը դրուած չէր, հետեւաբար բազկին ներքին կողման մէկ մասը արմուկէն վար վեց մատնաչափ երկայնութեամբ սպիւաւոր, ոլորեալ

եւ պնդացած մնաց : Թեքողական մկանունքը այնչափ ազդուած էին որ՝ նոյն ձեռքին մատները չէին կրնար գոցուիլ գրեթէ : Ուղիղ կրնային բացուիլ, բայց երբ ի հանգիստ, ճիրանածեւ տեսք մը կ'առնուին եւ վշտալի տձեւութիւն մը կ'երեւէր :

Պէլ-Վիւ ընդունուելէն յետոյ մի քանի փոքրիկ միջոցներ գործածուեցան այս տձեւութիւնը նուազեցնելու համար, այլ առանց յաջողութեան : Այս մ'առաջ խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ այցելու վիրաբուժին եւ իւր օգնականաց մէջ, եւ որոշուեցաւ հիւանդը բժշկել « մկանանց փոխանցութիւն » կոչուած գործողութեամբ : Այս երկրին մէջ երբէք կատարուած չէր յաջողութեամբ, որչափ որ յիշատակութիւնը կը ցուցնեն, եւ միայն անդամ մը Եւրոպիոյ մէջ տքթոր Հիրօթէլտ, գերմանացի մասնագէտ մը, փորձած էր : Մասնաւոր վտանգ մը չի կար գործողութիւնը կատարելուն մէջ, միակ դժուարութիւն ըլլալով մտոյ միացում մը գոյացնել, այնպիսի կերպով մ'որ հիւանդին կենդանի մնին վրայ օտար նիւթ մը կցորդուելուն պատճառաւ քաղցկեղ կամ փտում չի պատճառէ : Հիւանդը գործողութեան կատարման առանց վարանելու հաւանութիւն տուաւ, քանզի խիստ կը փափաքէր իւր բազկին գործածութիւնը վերջստին ստանալ եթէ հնար էր : Երբ հրաւիրուեցաւ երթալ անդամահատութեան ընդարձակ սենեակ մը չէնքին վերնայարկին վրայ, յօժարութեամբ դնաց : Բայց քիչ մը վարանեցաւ երբ այս գործողութեան ապականտես ըլլալու համար եկած ուսանողաց բազմութիւնը տեսաւ անդ հաւաքեալ : Իւր վախը իսկոյն խաղաղեցուցին եւ անդամահատութեան սեղանին վրայ իւր գիրքը առաւ : Եթէ պարունակող մեծ կոնոն մը իւր բերնին ու քթին վրայ դրուեցաւ, որովքիչ յետոյ անդգայ վիճակի մը փոխուեցաւ : Չախ բազուկը իսկոյն մերկացուեցաւ եւ վիրաբուժը գործել սկսաւ իւր դանակով : Նախ հատում մ'եղաւ, բազկէն զուգահեռական կերպով հինգ մատնաչափ երկայնութեամբ, ոլորեալ եւ պինդ մասին վրայ, եւ մորթը բաժնուեցաւ մկանունքէն երեք մատնաչափ միջոցով եւ վրան դարձուեցաւ քրդանցի ձեւով : Բաժանեալ մկանանց ծայրը կտրուեցաւ թարմացնելու համար զայնս, որ

պատճառեց արեան հոսում մը, բայց ոչ սաստիկ : Յետ այս գործողութեան, հիւանդը պատրաստուած էր մկանունք ընդունելու :

Ուրկից պիտի դար այդ : Ոչ մին ուսանողաց, որ բազմութեամբ դիտած էին գործողութիւնը մինչ ցայն վայր, ուղեց յառաջ գալ եւ իւր մարմնոյն վրայ անդամահատութիւն մը կատարել տալ : Այս միջոցիս ներքնասենեկէ մը բարձր հաշիւն մը լուեցաւ եւ կողմնակի բացող դռնէն օգնականաց մին Նիւֆառուէնտի մեծ շուն մը ներս բերաւ : Շունը կնոյմէն աւելի վարանում ցուցուց, թէ եւ չկրցաւ իւր կացութիւնը իմանալ եթէ գիտնար, հաւանակոնաբար հոն դտնուելու չէր : Երբ շունը կընոյ պառկած սեղանին մօտեցուցին, իւր կողման վրայ հանգչեցուցին եւ մեծ Եթէրով ի կոնոն մը քթին վրայէն անցուցին : Վայրկեան մը յուզուեցաւ եւ ջանաց շունչ առնուլ, յետոյ դարձուց իւր աչքերը դէպի վեր իւր սալանիչներուն, եւ գոցեց զայնս յաւիտենականապէս : Երբ բոլորովին Եթէրի գործիւն տակ էր, իւր ետեւի ոտքն ածիլուեցաւ եւ հատում մը տեղի ունեցաւ ճիշդ մորթին մէջէն : Դանակի ճարտար գործածութեամբ մը կաշին զտուեցաւ մէկ գրեթէ 3 քառակուսի մատնաչափ տարածութեամբ մը եւ վրան դարձուեցաւ, մերկ թողլով լաւ կերպով աճած մկանունք մը : Կնոյն բազուկը, որ դադարած էր արիւնեղէ, մաքրուեցաւ եւ վերքը բոլորովին գործօն վիճակի մը մէջ դրուեցաւ : Ամեն բան պատրաստ ըլլալով, վիրաբուժը բռնեց շանը ոտքին մէջ գտնուած մեծ մկանունքին մէկ ծայրը եւ որոշ ու արագ հատմամբ մը զատեց մաս մը միս հինգ մատնաչափ երկայնութեամբ, երեք մատնաչափ լայն եւ կէս մատնաչափ խորութեամբ կարելի եղածին չափ հաւասար : Այնչափ արագ կատարուեցաւ այս գործողութիւնն որ շանը սրբտին բաղխիւնը դեռ թողած չէր իւր ոտքէն բաժնուած մսի կտորն, երբ զայն սաստիկ ճնշմամբ մը կնոյն արիւնահոս բազկին վրայ պատրաստ գտնուած նոյն չափով բաց ոսկորին վրայ դրուեցաւ : Ասեղ մը եւ մետաքսեայ թել մը ի պատրաստի էին եւ վիրաբուժը շանը միսը կնոյն բազկին մէջ դնելով եւ կնոյն մորթը վրան դարձնելով կա-

րեց : Իւր գործը գրեթէ ամբողջովին աւարտած էր երբ կինը զգայնութեան դառնալու նշաններ ցուցուց , եւ իսկոյն ներքնասենեակ մը փոխադրուեցաւ ուր իւր բազուկը կապուեցաւ : Շունը այլ եւս չպիտի կարենայ ցատկել իւր մկանանց կորստեամբ , քանզի նախ քան էիեբին ազդեցութենէն ազատիլը , ննջեցուցին զինք յաւիտենական բնով :

Գործողութիւնը տեւեց երեք քառորդ ժամ եւ ամեն տեսակէտով յաջող եղաւ : Շաբաթ մը յետոյ վերքը բժշկուելու նշաններ ցուցուց եւ մինչ գլխաւոր մասը բազկին հետ միացեր էր : Մայրերը շարաւի եւ պալարի նշաններ ցուցուցին , բայց այս անպաստ վիճակին առաջն առնուեցաւ մեղմացուցիչ միջոցներով : Վէրքն այժմ կատարելապէս բուժուած է : Բազուկը լաւ դիրքի մէջ է , թէեւ մասամբ իւրք միւսէն մեծ : Կինն այժմ կատարելապէս կրնայ կառավարել իւր ձեռքը , տձեւ երեւոյթը ամբողջովին աներեւութացած է եւ կարող է գործածել զայն այնչափ աղէկ որչափ որ այդ վէրքն ունենալէն առաջ :

Հաւանականաբար հիւանդանոցը պիտի թողու այս շաբթու :

ՀԱՅՐ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՍԻՊԵՐԻԱՅԷ Ի ԶՈՒԻՅԷՐԻԱ
ՓԱԽՍՏԵԱՆ ՌԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շտր. և վերջ)

ՈՒՂԵԿՑՈՒԹԻՒՆ

Ի Քրասնովարսքի անդրէն բանտարկուեցանք ո՛չ սակաւ շաբաթներ , սպասելով նորագոյն տնօրինութեանց , ըստ որում հակառակ Քիէվի կարգադրութեանց՝ խիստ մեծ տարակոյս կար մեր ճակատագրին փոփոխման մասին : Վերջապէս վերջնական հրահանգներն հասան : Մինչեւ իրբուցք հասարակ բանտարկելոց պէս չլիցայակալ սլիտի յառաջանայինք (որովհետեւ աղնուական դասուն պատկանելով մայրաքաղաքէն մինչեւ հոս առանց չլիցայի գալու շնորհքը տրուած էր ինձ) : Յայնժամ փոխադրուեալ

գաղափարը զառաջինն յղացայ , որ ի Սիպերիա տարագրելոց մէջ ստէպ ի գործ դրուած հնարք մ'է : Ադոր մեթոտը այս է . — Երկու բանտարկեալը սակարկութիւն կ'ընեն , որով մին միւսին անունը , վկայականը եւ ոճիրը կ'առնու եւ փոխադարձաբար : Այսպէս կատարեալ փոխանակութիւն կ'ըլլայ անձնաւորութեանց , որոց մին կ'ընդունի քիչ մը դրամ իբր տարբերութիւն : Հետեւանք այն է որ չլիցայակալ աշխատութեան դատապարտեալ մը կ'ըլլայ պարզ կամ ազատ աքսորեալ ի Սիպերիա եւ փոխադարձաբար : Անարդար թուի այս սակարկութիւնը գուցէ , այլ անարժաթ ոմն հաւանականաբար ոչինչ կը խնայէ ի սէր դրամի :

Այսպիսի փոխանակութիւնը դիւրութեամբ կատարուեցան մեր ճամբորդութեան միջոցին : Ըստ որում պահապանները երկու օրը անգամ մի կը փոխուին՝ անկարելի է անոնց որ ընտելանան երկու հարիւրի մօտ անձանց , որք կը կազմեն ուղեկցութիւնը : Ուրիշ բան չեն կրնար ընել այս պահապանք եթէ ոչ հաճել ուղեկիցներու թիւը . եւ եթէ ո եւ է պահապան մը իւր նախորդէն առած թիւը ամբողջապէս յանձնէ իւր յաջորդին , իւր պարտքը լիովին կատարած կ'ըլլայ արդէն :

Օգոստոս 20ի մօտերը — օրը ճիշդ չեմ յիշեր — վերստին յուղի անկանք , այս անգամ հետիոտն : Ի Քրասնովարսքիէ յորոշեալ վայրն 700 անգլիական մղոն է եւ երկու ամսէն հազիւ հազ կրնայինք հասնիլ : Այսպէս առատ միջոց ունէի յանցաւոր ընկերացս հետ ծանօթանալու :

Կանոնը , որոյ պարտէինք հնազանդիլ , այժմ փոփոխումն կրեց : Յարդ պահապաններէն զատ եւ ոչ մէկու հետ կրնայինք խօսիլ : Իսկ այսուհետեւ արտօնուած էր մեզ իրարու հետ տեսակցիլ : Ուղեկցութիւնը 170 անձերէ կը բաղկանար , երկու սենեկ եւ ամեն դասակարգէ ու հասակէ , իւր մօր բազկաց մէջ գտնուող երախայէն մինչեւ ալեւոր ծերունին : Բազումք դեղջուկներ էին , իսկ սակաւք աղնուականք : Քանի՛ կը յառաջանայինք , այնքան կը նւազէր ուղեկցաց թիւը , զի պահապանք պարզ աքսորեալներէն շատերը , իբր ակամայ դադրական , կը թողուին աստ անդ գտնուած ցանցաւ գլխերուն մէջ :

Երկու օրը միանգամ «իջեալն» կոչուած չէնքի մը մէջ հանգիստ կ'առնուինք : Սոյն իջեալնին մէջ կայ մի ճշգրտ կամ խանութ : Խանութպանը, որ միշտ արտօրեալ մ'է, ճարտիւնը կը կոչուի : Մարքիթանթի սենեակը սյաղան տեսադան տեղի կ'ունենայ. մերթ արտօրեալ մը վերարկուի, կոշիկի կամ հինցած ժամացոյցի մը համար սակարկութիւն կ'ընէ մարքիթանթին հետ, ուրիշ մը կարկտան կը ձգէ, այլ ոմն հոգում մարմնով ահագին շղթայներուն երկաթը միճով կը ծեծէ որպէս զի խուսափի, եւ եւ :

Օրերը անսայթաք իրարու կը յաջորդեն եւ ես թէպէտ չի համարձակեցայ փոխանակուելու գաղափարս ի կիր արկանել, այլ երբէք չէի տարակուսեր որ առաջին նստատաւոր առթիւ խոյս տամ : Գրեթէ ամեն օր թափառալիկներու, կամ անցագիր չունեցող փախստականներու, կը հանդիպէինք որ կը չուէին դէպ ի Ռուսիա : Ո՞վ դիտէր թէ փոքր ինչ յետոյ ես ալ ասոնց պէս պիտի ըլլայի : Զարմանալի էր որ ո՛չ մեր պահապան սպայն եւ ո՛չ ալ այլ եւ այլ կայաններու իշխանութիւնը, որոց առջեւէն համարձակ կ'անցնէին այս թափառալիկը, ամենափոքր ուղադրութիւն չի դարձուցին : Անոնց մէջ վաղեմի բարեկամներ եւս ճանչցայ :

ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆ

Իրքուցքի տասն եւ չորս օր մնացեր էր երբ յաջողեցայ սարդ արտօրեալի մը հետ փոխանակուիլ : Ուրիշ շատեր իմ օրինակին հետեւեցան : Այն 170 աճերէն, որ ուղեկցութիւնը կը կազմէին, ոչ աւելի քան յիսունն շղթայակալ աշխատութեան դատաւարտեալ էին եւ ասոնցմէ առ նուազն քսանն փոխանակողներ գտան : Այս փոխանակումն արձակ համարձակ կը կատարուէր : Անկարելի էր մատնութիւն ընել, զի մատնիչն, ինչպէս ամեն տարագրեալ դիտէր, անմիջապէս կը սպաննուէր իւր ընկերներէն :

Ինձ հետ փոխանակուողը, ծագումաւ գեղջուկ եւ արհեստիւ աւազակ, հաւանեցաւ փոխանակման, պայմանաւ որ վճարեմ իրեն տասն եւ վեց շիլին, զոյգ մի կոշիկ եւ

մի սուկան ասուեայ : Կարգադրութիւն մ'ըրինք, որով առաջին իջեալնը հանդիպածնու պէս՝ իջեալնին մէկ մութ անկիւնը պիտի երթայինք եւ ձորձերնիս պիտի փոխանակէինք : Բավով, իմ աւազակ բարեկամս, եղաւ մի աղնուական քաղաքական բանտարկեալ եւ ես մի պարզ չարագործ : Թէեւ դիմօք անմահ իրարու, այլ նոյն բարձրութիւնը եւ հասակը ունէինք :

Պահապաններու փոփոխումն դիւրութեամբ կատարուեցաւ : Բավով, երեսը կապած, սեղանի մը վրայ պառկիլ ձեւացուց : Ոչ ոք ուղադրութիւն դարձուց իմ եւ անոր վրայ եւ երբ հին պահապանները հեռացան, զգացինք թէ մեծ վտանգ մ'անցուցինք : Առաջին առթիւ ամիւսի մօրուքս եւ մաղերս, որպէս զի կարելի եղածին չափ նոր ընկերներուս նմանիմ (զի այլ եւս աղնուական չէի) :

Զարմացայ ապա եւ մինչեւ օրս կը վարմանամ թէ ինչպէս պահապանները խառուեցան այս փոխանակման դօրծին մէջ : Արձանագրութեան տոմարին մէջ ես, Տէպակորի Մոքրիէվիչ, նշանակուած էի իւր նախկին բժշկական ուսանող, հետեւորար մի անգամ համարաւորանի. իսկ Բավով նշանակուած էր մի անուս դամիկ : Անգամ մը որ բանար բերանը՝ անմիջապէս յայտնի կ'ըլլար իւր ծագումն եւ տղիտութիւնն : Ես իւր աղնուական ունէի հեր եւ երկայն մօրուք, մինչ Բավով չուէր ո՛չ հեր, ո՛չ մօրուք : Ի՞նչպէս հար էր որ այս ամենը թերանային կասկած յարուցանելէ : Օրին մէկը, պահապան սպայ մը տեսնելով թէ բժշկական ուսանող արձանագրուած էր՝ իւր հիւանդութեան դարման խնդրեց Բավովէն, որ, ժպրհութիւնը դերագոյն աստիճանի հանցունելով, այլանդակ դեղեր տնօրինեց. բարեբաղդաբար դեղադիր չի պահանջուեցաւ :

Փոխանակմանէ յետոյ իւր հասարակ չարագործ կը քայլէի հետիտան, կրելով իմ շղթաներ. օրական կը վճարէին ինձ երկու բէնս, փոխան երեքի զոր կ'ստանար Բակով, որ կրնար այժմ՝ իւր ձանձրոյթը փառաւել մերթ կառք հեծնելով, մերթ հետիտան քայլելով :

1879 հոկտեմբեր 20ին Իրքուցք ժամանեցինք, ուր բարձրագոյն իշխանութեան առ-

ջեւ նորէն քալտի քննուէինք : Երեկոյեան ժամ ութին կեդրոնական բանտը մտանք : Պահապաններէն մին դրան առջեւ կեցած՝ կոչեց բանտարկեալները մի առ մի, եւ իւրաքանչիւրը երբոր կանչուէր, կ'երթար սենեակ մը, տանելով իւր հետ չնչին գոյքերը, ստուգելու համար թէ պահած էր Գահէն իրեն յանձնուած ինչքը : Ի վերջոյ իմ կարգս եկաւ :

— Բա՛վրով, պոռաց պահապանք :

— Աւասիկ եմ, պատասխանեցի՝ տանելով գոյքերս սլաշտօնէից առջեւ որք արձանագրութեան տուամարը բացած՝ սեղանի մ'առջեւ նստած էին :

— Պօղոս Բա՛վրովը դո՞ւ ես, ըսաւ նախագահը :

— Այո՛, տէ՛ր իմ, պատասխանեցի՝ կարելի եղածին չափ զեղջուկ՝ բանտարկեալի մը պէս խօսելով :

— Ի՞նչ ոճի՞ համար դատուեցար :

— Աւազակութեան համար, տէ՛ր իմ :

— Կառավարութեան քեզ յանձնուած գոյքերը պահած ես :

— Այո՛, տէ՛ր իմ :

— Երկու չապիկ, երկու գոյգ վարտիք, մի բրդեայ տաբատ, մեծ վերարկու, մուշտակ, մի գոյգ կոշիկ եւ շղթայք, թուեց խորհրդականը եւ մի պահապան ծրարիս մէջ կը փնտռէր յիշուած գոյքերը :

Քննութենէն վերջը յանձնեցի կասկանքս եւ առաջնորդուեցայ մի սենեակ, ուր գիշերելէ յետոյ պիտի թողուին զիս գիւղի մը մէջ իբր պարզ աքսորեալ կամ դաղթական : Երկայն չի սպասեցի : Յաջորդ օրը ակտայ դաղթականք, յորոյ մին էի արդ, ուղի անկան դէպի մի գիւղ որ Իրքուցքէ 40 մղոն հեռի էր : Նոյեմբերի առաջին օրը ժամանեցինք ի Թալլինքի, իմ ճամբորդութեան վերջնակէտը :

Պահապանները գնացին մէկ կողմ, մեք ուրիշ կողմ եւ սահմանափակ շրջի մը մէջ կրնայինք ազատ շրջագայիլ :

Փ Ա Ս Ո Ւ Ս Տ

Եթէ պիտի վախճէի, ժամանակ չունէի կորսնցնելու . ո՛ր եւ է ժամանակ կրնայի մատնուիլ : Իմ դաղթական ընկերք, որպէս նաեւ յիբքուցք թողուած բանտարկեալք,

ամենքը կը ճանչէին զիս : Անոնցմէ ո՛ր եւ է մին մատնիչի դեր կատարելով կրնար մեծագուժար վարձք ստանալ : Ուստի հարկ անհրաժեշտ էր իսկ եւ իսկ ճամբայ ելնել . բայց անհնար էր մի այսպիսի երկայն ճամբորդութեան ձեռնարկել առանց կոպէկ մ'իսկ ունենալու : Ուստի վաճառեցի մեծ վերարկուս, բրդեայ տաբատս եւ թաթպանս մէկ ու կէս բուսլլիի փոխարէն . աժա՛ն դնաց : Ինձ մնաց այժմ մի մուշտակ, գլխարկ, բարակ տաբատ եւ սովորական փոխնորդ որ սիպերեան բուռն ցրտէն անշուշտ զիս պահպանելու անկարող էին : Բայց չի վարանեցայ : Նոյեմբերի երկրորդ օրը, իններորդ ժամուն, կէս օրէ առաջ, մեկնեցայ Թալլինքի գիւղէն, ուր տասն եւ չորս տարիէ աւելի պիտի անցունէի : Հանդարտ եւ քնն, թէպէտ միշտ ցուրտ, առաւօտ մ'էր : Ինքզինքս ծածկելու փորձեր չըրի, զի դեղին մուշտակովս եւ ամբողջովին ածիլեալ գլխովս յայտնի թափառայած մ'էի, եւ սորա յԱրեւելեան Սիպերիա, ինչպէս արդէն յիշեցի, ո՛չ կը ձերբակալուին եւ ո՛չ կը հարցաքննուին . հետեւաբար կը մտածէի թէ ես եւս ո՛չ պիտի ձերբակալուէի եւ ո՛չ հարցաքննուէի . այլ ի՛նչ պատրանք :

Իբր թափառաչիլի ութ օրի չափ չուելով յոյժ նեղուեցայ թէ՛ ցրտէ եւ թէ՛ նօթութեանէ : Հովիտներու մէջ այնպէս սաստիկ ցուրտ կ'ընէր որ սրունդներս սառելու պէս կ'ըլլային . երբեմն ալ թանձր մէգ մը, որ եւս քան զեւս կը սաստկացունէր ցուրտը, ամբողջ հովիտը կը սպտէր . եւ թէպէտ միշտ կը գերծանէի, այլ սրունքներէս մին մնաց եղեմնահար :

Գիշերներն ընդհանրապէս թափառաչըրջկաց նման շինականի մը բաղնիքը կ'անցունէի, վասն զի չի կայ Սիպերիացի մը որ՝ որքան ալ աղքատ՝ չունենայ շոգոյ բաղնիք . այս շոգին նոքա յառաջ կը բերէին կրակ կտրած քարերու վրայ ջուր թափելով : Մի օր երեկոյեան մօտ գիւղ մը հասայ եւ բնակարան խնդրեցի : Փորձ թափառաչըրջիկներէ լսած էի թէ լաւագոյն էր աղքատէն ողորմութիւն եւ օգնութիւն հայցել քան հարուստէն . երբեք, կ'ըսէին, հարուստին դուռը չի դարնէք : Պատշաճ դատեցի հետեւիլ այս կանոնին որ փորձառութեան եւ խոր ճշմարտութեան վրայ հիմնեալ էր :

Վերոյիշեալ գիւղը ժամանեցուս պէս գտայ մի աղքատի տուն եւ, ըստ Ռուսաց սովորութեան, ներս մտայ սուրբի մը պատկերին առջեւ խաչակնքելով: Ապա ողջունեցի տանուտեարքը:

— Բարեւ, տղա՛ս, ըսաւ մի ծերունի գեղջուկ:

— Ինձ կտոր մը հաց կրնա՞ք ծախել, ըսի, զի թէև իբր թափառաշրջիկ կը չուէի, այլ բնաւ չէի սիրեր անոնց պէս մուրալ:

— Այո՛, կրնաս հաց գտնել, ըսաւ ծերունին նկանակ մը տալով:

— Շնորհակալ եմ, հայր իմ, կրնա՞մ նաև գիշերել հոս տանդ մէջ:

— Վախեմ անկարելի է այդ, տղա՛ս: Թափառաշրջիկ մ'ես, այնպէս չէ՞: Ոստիկանութիւնը հիմա շատ խստութեամբ կը վարուի թափառաշրջիկներու հետ, այնպէս որ եթէ մէկը թափառաշրջիկ մը (կամ անցագիր չունեցող մը) հիւրընկալէ իւր տունը, կը տուժէ: շիտակը ըսելով այս յանկարծական խստութեան պատճառը մութ է ինձ: Ո՛րկէ կուգաս, տղա՛ս:

— Ուղեկցաց խմբէն:

— Այդպէս կը կարծէի, շիտակ էի ուրեմն, թափառաշրջիկ մ'ես:

Ազերսագին ձեւերով պատասխանեցի եւ այնպիսի կերպարանք մ'առի՝ որ կրնայի այս բարի ծերուկէն աւելի քարասիրտ մէկու մը կարեկցութիւնը շարժել: Փոքր ինչ խորհելէ յետոյ,

— Գուր ընդհանրապէս բաղնիքը կը պառկիք, այնպէս չէ՞, ըսաւ լաւ, գնա բաղնիքս եթէ կամիս, ուրիշ տեղ չեմ կրնար տալ քեզ:

Ուստի նկանակս առնելով եւ սեղանին վրայ քանի մը կոպէկ ձգելով՝ գացի քովի բաղնիքը՝ որ մուշտակ կարենալ հանելու չափ տաք էր: Չ'արտորացի բնանալու, վասն զի տեսնելիք գործ ունէի: «Ոստիկանութիւնը հիմա շատ խստութեամբ կը վարուի թափառաշրջկաց հետ» կ'ըսէր ծերունին և ինչով կը տարբերէի թափառաշրջիկէ մը: Եթէ անկարելի էր անցագիր ունենալ, գէթ արտաքին երեւոյթքս զանազանելու էր թափառաշրջիկ երեւոյթէն, որպէս զի դիւրաւ զոհ չերթայի: Հարկ համարեցի դեղին մուշտակիս գոյնը փոխել, զոր ըրի մօմի ճարպէ եւ մեղծէ

պատրաստուած խառնուրդով մը շաղախելով: Թէպէտ եւ բոլորովին սեւ չեղաւ, բայց գործս կը տեսնէր: Այլ ժամ էր որ հանդէհի: Պատուական քուն մը քաշեցի, որ կարծեմ երկու ժամ տեւեց, երբ դրան ճռոնչէն արթնցայ եւ լսեցի մարդու մը ոտից դոմիւնը որ ինձ կը մերձենար: Ըստ որում խիստ մութ էր, չէի կրնար զայն տեսնել, եւ ճրագ վառել յարմար չի դատեցի: Թուէր թէ նորեկն ալ գաղափարակից էր ինձ, զի առանց բառ մ'իսկ արտասանելու դէպ յիս յառաջացաւ եւ քովս պառկեցաւ: Ես ալ նորէն քնացայ մինչեւ առաւօտ, երբ աչքերս բացուեցան ցրտէն, վասն զի բաղնիքին տաքութիւնը դացած եւ բարեխառնութիւնը սառուցման կէտին հասած էր: Նայ անկողնէս եւ մուշտակս առնելով ճամբայ ինկայ, թողով ընկերս, զոր ոչ եւս տեսայ, իւր երազներուն մէջ:

Միտքս դրի երթալ իմ մէկ ծանօթ բարեկամիս որ 150 մղոն հեռի էր այս գիւղէն: Մինչ հանդարտօրէն եւ ձերբակալուելու երկիւղիւ կը յառաջանայի՝ տեսայ մարդ մը որ աչք ըրաւ ինձ: Իւր կերպարանքէն հասկցայ որ պարզ աքսորեալ կամ ակամայ գաղթական մ'էր:

— Ներս չէ՞ք հրամմեր, եղբայր, քիչ մը հանգիստ առէք, գաւաթ մը թէյ խըմեցէք, ըսաւ:

Հաճութեամբ ընդունեցայ հրաւերը, զի դեռ նախաճաշած չէի: Միասին հիւղ մը մտանք ուր աղիւսեայ վառարանի մը ըով նստած էր հաւանականաբար իւր կինը: Ազնիւ հիւրընկալը պատրաստեց «մալալը» և խմեցինք ու խօսեցանք:

— Շատ ժամանակ կ'ընէ՞ որ բաժնուցար ուղեկցաց խմբէն, հարցուց հիւրընկալը:

— Շատ կանուխ. ես թիւ չորս ուղեկից խմբին կը պատկանէի, պատասխանեցի:

— Ուրեմն, եղբայր, թափառաշրջիկ մ'եղար:

— Այո՛, հոս մնալէն ի՞նչ կ'ելնէ:

— Ճշմարիտ ես, դառնութեամբ պատասխանեց աքսորեալը, զղուելի է այս երկիրը: Եւ ալ նոյնը օլիտի ընեմ մէկ երկու ամիսէն: Ո՛ր ճամբէն կ'երթաս, Անկա՛րայի ճամբով:

Տուի իրեն զի ուղեգիր որ միտքս դրած էս տարբեր էր :

— Այս տեղումնքը շատ աղէկ գիտեմ, ըսաւ, բայց գիտե՞ս թէ՞ զգոյշ կենալու ես կառավարութիւնը յոյժ խիստ է հիմա թափառաշրջկաց հետ, ուստի չըջահայեաց ըլլալու ես :

— Ի՞նչ խրատ կուտաս որ կատարեմ, հարցուցի ահաբեկ :

— Պիտի ըսեմ, եղբայր, մտիկ ըրէ :

Ապա կարի օգտակար տեղեկութիւններ տուաւ ինձ. նկարագրեց այն գիւղերն ուստի պիտի անցնէի. յիշեց այն գեղջուկները որոց տունը պիտի ագանէի, ի մի բան զըրուցեց ամեն ինչ որ հարկ էր ինձ գիտնալ :

— Բայց է՞ր, հարցուցի, ոստիկանութիւնը այսքան խիստ է հիմա :

— Աստուած գիտէ. թերեւս տեղ մը դիակ մը գտնուած է եւ ոստիկանութիւնն սպաննիչը կը փնտռէ :

Դիտողութիւն չըրի, սակայն կը կռահէի թէ խիստ հաւանական էր որ փախուստս յայտնի եղած էր եւ իմ ետեւէս ինկած էին Թէյը վերջանալէն յետոյ՝ պատրաստուեցայ մեկնիլ շնորհակալ ըլլալով այս բարի մարդուն թէ՛ իւր հիւրասիրութեան եւ թէ՛ իւր ինձ տուած տեղեկութեանց համար :

Յուրտէ, նօթութենէ եւ յոգնութենէ խոնջեալ՝ հասայ գիւղ մը. բարեկամս ծեր կնոջ մը հասցէն տուած էր ինձ որ անոր տունը գիշերէի : Այս տունը գիւղին մէկ ծայրն էր եւ հոն երթալու համար հարկ էր գիւղին իշխանութեան առջեւէն անցնիլ : Վտանգալի՝ ձեռնարկ : Անտարբերութեամբ սակայն յառաջացայ եւ ո՛չ որ ուշադրութիւն դարձուց վրաս : Յանձնարարուած տունը մտայ, ուր ծերուկ կին մը սրտագին ընդունելութիւնն մ'ըրաւ ինձ եւ նախաճաշի պատրաստութիւններ տեսաւ : Հիւղը տաք էր. սեղանի մը վրայ հազիւ թէ ինկեր էի պառկելու եւ ահա լսեցի զանգակներու ձայնն որ ինձ թղթատար սայլի մը զանգակին ձայնը թուեցաւ, վասն զի ի Ռուսիա բոլոր թղթատար սայլեր անմիջեպ կը կրեն մի՛ դանդակ :

— Չանդա՛կ, պոռացի, թղթատար սայլը այս կողմէն կ'անցնի :

— Ո՛չ, պատասխանեց պառաւը, թղթա-

տար սայլ չունինք հոս, հաւանականաբար մասնաւոր կառք մ'է :

Միեւնոյն ժամանակ զանգակին ձայնը աւելի մօտէն կուգար. ապա ձայները իսկ եւ իսկ դադրեցան : Բնաւ դործիս չեկաւ այս, ի՞նչ կը նշանակէր այս բան :

— Կը հաճի՞ս երթալ տեսնել թէ ի՞նչ կամ ո՞րու կառքն է, ըսի :

Երբ դուրս ելաւ՝ ցատկեցի սեղանէն եւ ձորձերս հադայ : Քանի մը րոպէէն պառաւը վերադարձաւ ըսելով թէ ոստիկանաց կառքն էր :

— Ոստիկանաց, պոռացի, ո՞վ կ'ըսէ, ո՞ւրկէ կուգան :

— Իրքուցքէ : Կառապանը ինք ըսաւ ինծի : Նա կը կարծէ թէ քաղաքական բանտարկեալ մը փնտռելու ելած են :

— Եթէ այդպէս է, լաւ կ'ըլլայ որ մեկնիմ, ըսի խնդալով, կրնայ ըլլալ որ զիս այդ մարդը կարծեն : Հիմա ինձ նայէ. եթէ քեզի բան մը հարցունեն՝ չեմ գիտեր ըսէ, ապա թէ ոչ գէշ կ'ըլլաս. մնաս բարով (վերջին կոպէկս սեղանի վրայ դնելով) :

— Երթաս բարով, հոգ մի՛ ըներ, բան մ'ալ չեմ ըսեր ես :

Ճամբայ ելայ : Երբ գիւղին վերջին տունէն անցայ՝ սրբնթաց վաղեցի, զի ինձ այնպէս կը թուէր թէ հալածիչներս ետեւէս կը վազեն : Հակառակ ձեռք առած այնքան զգուշական միջոցներուս ի՞նչպէս հնար էր որ ոստիկանութիւնը քայլ առ քայլ ետեւէս գար : Միայն բարեկամիս տունը հասնելով կրնայի ապահով ըլլալ : Բայց ի՞նչպէս պիտի հասնէի հոն առանց նշարուելու : Արշալոյս էր եւ ոստիկանք ի խնդիր ինձ ելած էին : Շանց հաշիւնէն հետեւցուցի թէ երկու մղոն ճամբայ ունէի ընելիք : Չորս կողմս նայեցայ. մէկ կողմ՝ ընդարձակ դաշտեր, միւս կողմ՝ մացառներ : Ըստ որում դեռ ոչ որ տեսած էր ինձ, ոստիկանութիւնը չէր կրնար տեղեկանալ իմ մասիս, բայց լոյսը կը կոխէր եւ եթէ յառաջանայի՝ կրնայի ո՛ր եւ է մէկու մը հանդիպիլ, որ գէշ հետեւանք կ'ունենար : Բան մը եւ եթ կար ընելիք. մացառներու մէջ ծածկուիլ ամբողջ օրը. իսկ հետքերս ի՞նչ ընելու էի. գիշերը առատ ձիւն տեղացած էր, այնպէս որ քայլերս յատակ հետք պիտի ձգէին ձիւնին վրայ, որոց հետեւելով ոստիկանութիւնը

կրնար դիւրաւ գտնել զիս : Մտածեցի հընարք մը գործէ կարգացած էի վիպասանութեան մը մէջ : Փոխանակ երեսս դէպ ի թաքստոցը յառաջանալու, յետոյ յետոյ յառաջացայ անդ, ուր անցուցի ամբողջ օրը մինչեւ մութ երբ նորէն ճամբայ ելայ ուղղակի բարեկամիս տունը : Ի մեծ միտմարութիւն ինձ, բարեկամս ինք բացաւ դուռը :

— Զի պիտի ճանչէի զքեզ եթէ ձեռք հիմա լսած չըլլայի պատմութիւնդ, ըսաւ զիրար փոխադարձօրէն ողջունելէ յետոյ :

— Շատ կը փախաքիմ ինքզինքս տեսնել, պատասխանեցի. ձերբակալուելէս ի վեր հայելի ձեռքս անցած չէ :

Այնքան փոխուած էի, որ հազիւ իմն կը ճանչէի ինքզինքս :

— Ե՞րբ լսեցիր փախուստս, հարցուցի :

— Այսօր : Ոստիկանութիւնը ետեւէդ ինկած էր. ամեն տուն խուզարկեց. քայլ առ քայլ քեզ հետեւեցաւ. գտան իսկ թէ ո՛ւր պիտի անցունէիր գիշերը, բայց յանկարծ կորսնցուցին զքեզ : Ո՛ւր էիր :

Պատմեցի իրեն :

— Մէկը տեսա՞ւ հոս գալը, հարցուց :

— Ո՛չ :

— Լաւ. հոս մնալ չըլլար : Ոստիկանութիւնը, թէեւ յուսահատ, այլ միշտ կը փնտրուէ զքեզ. հաւանականաբար վաղը նորէն գայ : Հոս գիշերել չըլլար :

— Ո՛ւր ուրեմն :

— Ագարակս դնաւ. բայց նախ եւ առաջ փոխէ ձորձերդ :

Մինչ այսպէս կը խօսէր բարեկամս, զնսց պահարանէն քանի մը կտոր ձորձ բերաւ, զոր հագնելով նոր մարդ դարձայ :

— Ագարակդ շատ հեռի՞ է, հարցուցի :

— Անտառին խորը, իբր 25 վերսդ հեռի :

Ժամ մը յետոյ ճամբայ ելանք բարեկամիս հետ, որ այնպիսի կարգադրութիւն մը ըրած էր որ տան մէջ ոչ ոք ոչ գալս եւ ոչ երթալս գիտէր : Ոստիկանութիւնը յուսահատած էր :

Ա. ՋԱՏՈՒԹԻՒՆ

Որպէս ալ տեղեկացայ՝ Իրքուցքէ մեկնելէս քիչ յետոյ ընկերներէս մին մատնած

էր զիս. բայց երբ ոստիկանը թալանեցի զիւրը հասան՝ ես արդէն աներեւութացած էի : Վեց շաբաթ բոլոր ձիգ ի դորձ գրին զիս բռնելու, յետոյ յուսահատեալ, տարաձայնութիւն մը հանեցին թէ անտառին մէջ գտնուած զիսկը իմ գիակս էր, իբր թէ նօթութենէ մեռած էի : Ըստ մի այլ պատմութեան՝ ես ձերբակալուած էի ի Նիժնի-Ուսինսք եւ թէ Իրքուցք կ'երթայի : Յայնժամ իմ անուամբ բազում թափառաւորիկը բռնուեցան : Անգամ մը չորս կեղծ Տէպակորի Մորրիշվիլ կային Իրքուցքի բանտին մէջ :

Երեք ուրիշ բանտարկեալը որ նոյն ժամանակ փորձած էին փախչիլ, բռնուեցան :

Ի Սիպերիա մէկ տարի մնացի : Երբ ոստիկանութիւնը վերջապէս դադրեցուց զիս գտնելու համար եղած ամեն խուզարկութիւն, որոշեցի մեկնիլ : Անցագիր մը անհրաժեշտ հարկ ըլլալուն՝ նորոգ հանգուցեալ Իվան Ալէքսանտովիչ Սէլիվանովի անցագիրը եւ անունը առի : 1880ի ձմեռն մէջ ճամբայ ելայ. 5600 միլոն տեղէ պիտի անցնէի : Իրքուցք, Քրասնովարսքի եւ Թոմսք քաղաքներէն անցայ, քաղաքներ ընդ որս տասն երկու ամիս առաջ իբր բանտարկեալ անցեր էի :

Ճամբորդութեանս միջոցին հանդիպեցայ բանտարկեաց, որ Ռուսիայէ յԻրքուցք կ'երթային : Երկաթներու հնչիւն, դեղին մուշտակներ, ծիւրեալ դէմքեր, — ա՛հ, ի՛նչպէս ընտանեցած էի այս ամենուն, ի՛նչպէս հոգւոյս կը թափանցէր այս տեսարանը :

Յաջող կ'երթայի : Անգամ մը եւ եթ ձախորդութեան հանդիպեցայ : Այնպէս պատահեցաւ որ Թոպոլսք գաւառէն անցած պահուս Զինովիքի (կառավարական պաշտօնեայի) մը հետ ծանօթացայ. գիրուկ, զուարթ եւ զիւրահամբոյր մարդ մ'էր : Գաւառին մերձակայ գլխիւ գերէն մին գիշերել հարկ ըլլալով՝ բնկերոջս հետ «իջեւան» մը մտանք : Ըստ սովորութեան իջեւանի մէջ սպասող կառավարական պաշտօնէին տուի անցագիրս եւ պատուիրեցի որ առաւօտեան ժամը 10ին պատրաստ ըլլան ձիերը : Անխուով ննջեցի եւ յաջորդ առաւօտ ընկերոջս հետ պատրաստուեցանք մեկնելու :

— Զիւրքը պատրաստ են, հարցուցի պանդոկատներին. խնդրեմ անցագիրս ալ բերէիք :

— Անցագիրը պաշտօնեայն անձամբ պիտի բերէ, ըսաւ :

Այս ժամ յետոյ եկաւ պաշտօնեայն իմ եւ ճամբորդ ընկերոջս սենեակը :

— Կը ցաւիմ որ զձեզ անհանգիստ պիտի ընեմ, ըսաւ քաղաքավարութեամբ. բայց կ'ուզեմ գիտնալ թէ ձեզմէ ո՞վ է Իվան Ալէքսանտրովիչ Սէլիվանօֆ :

— Ես, պարոն, պատասխանեցի համարձակութեամբ :

Պաշտօնեայն սալուշ ապուշ ինձ նայելով հոսկ ուրեմն խոնարհութեամբ «Հաղար ներում, պարոն, ըսաւ, բայց չիտակը խեղքս չի հասաւ այս խօսքին : Ես կը ճանչեմ Պ. Սէլիվանօֆը որ տարի մ'առաջ մեռած է. զարմանալի է որ այս անցագրի մէջ կը տեսնեմ նոյն անունը, նոյն մականունը, նոյն հօր անունը եւ վերջապէս նոյն շէնը (աստիճանը) : Սխալած ըլլալու եմ, պարոն, հաղար ներում» :

Ինձ այնպէս թուեցաւ թէ հոգը կը դողար ոտքերուս տակ. սակայն անմիջապէս ժպտուն դիմօք պատասխանեցի. «Իրաւունք ունիք, պարոն, իմ եղած տեղս Սէլիվանօֆները մորենիի չափ առատ են : Հանգուցեալ Իվան Ալէքսանտրովիչը, քու բարեկամք, եւ ես ազգական էինք եւ յոյժ կը սիրէինք զիրար. այդ անունը այդքան հասարակ է մեր գաւառը որ երբոր ուզես կրնամ քեզի երկոտասանեակ մը Իվան Ալէքսանտրովիչ Սէլիվանօֆներ ցուցնել» :

Պաշտօնեան դոհ կ'երեւէր, գէթ առարկութիւն չըրաւ : Այս վերջին վտանգն էր որմէ մազապուր պրծայ : Այնուհետեւ այս կեղծ անցագրին միջոցաւ կրցայ այլ այլ կայարաններէ անցնելով 1881 մայիս ամսոյն հասնիլ ի Ճընէվա, Զուրիցերիա, ուր ինքզինքս կատարեալպէս ազատ կը զգամ :

Թարգ.

ՈՒՅԼԻՐՄ ՈՒՅՍԻՈՒ.

Ա. ԳԵՈՐԳԵԱՆ

ՆՈՐԱՎԵՊ

ԱԼՊԵԱՆՅ ՎԱՐԴԷ

Ա.

1830 ին, դէպի աշնան վերջերը, մինչ անտառաց տերեւները կ'սկսէին դեղնիլ, Հօրաս Միւլլէր իւր հայրենիքէն՝ Միւնիխէն կը բաժնուէր :

— Սրհետդ կը բաւէ քեզ ապրեցնելու համար, ըսած էր հայրը, ա'ւ ճամբորդութեան մախաղդ եւ գնա' :

Հօրաս որ հպարտ էր սրտիւ, այս պատուէրը կրկնել չտուաւ : Իբրեւ հարազատ շրջուն նկարիչ, իւր կահ ու կազմածքն ուսն առաւ եւ իւր ընտանեաց երկու երեք հըրժաժեշտի խօսքեր ուղղելէ վերջ, սկսաւ իւր շրջան յերոպա :

Ո՞ր երթար, ո՞ւր չերթար : Պատանին՝ իբրեւ թուշիկ որ առաջին անգամ կը բաժնուի իւր բոյնէն, տեղի կուտար մտատանջ վարանման : Պիտի մեկնէր, ամեն ինչ զայս կը պահանջէր, բայց երբ տէրութեան սահմաններն անցնելով՝ Գերմանիա հասնի, ա'լ իւր մօր գգուանքէն ու քերց քաջալերութեանէն զուրկ պիտի լինի : Յիրաւի իւր վըրձնոյն վրայ վստահ էր, զիտէր թէ արդէն բաւական տաղանդ ունէր ժտելու չափ, բայց տաղանդն միշտ բաւ չէ արուեստագէտ մ'ապրեցնելու համար : Ո՞վ գիտէ թէ քիչ ատենէն աւուր պարէնն չափով պակսի : Վերջապէս Հօրաս կը վախնար արկածներէ, անձանօթէ, անստուգութենէ : — Միւս կողմէ կ'ըսէր թէ պէտք չէ որ արմատ բռնէ առ սեամս հայրենի տան : Ինքզինքը կը հարցաքննէր, համոզուելու եւ հասկնալու համար թէ ա'լ ժամանակն էր իւր հորիզոնն ընդարձակելու, նոր բնութիւն մը տեսնելու, ուրիշ մարդիկ, ուրիշ երկիրք ուսումնասիրելու համար, որմէ զուրկ էր :

Եւ իբրեւ պսակ բանից կը գոչէր .

— Հայրս իրաւունք ունի, պէտք է մեկնիմ :

Յետ որոյ ճամբայ ելած էր :

Այս ճամբան, նկարիչն որոշում մը տըլաւ :

— Զուրիցերիոյ վրայ շատ կը չարախօ-

սէին, կը կրկնէր: Նկարիչ ընկերքս, բանաստեղծը եւ ուղեւորը յոյժ կը բամբասէին զայդ հինն Հելլենտիա: Ըսին թէ անխորժ երկիր մ'է, պանիրէ բաղադրեալ հող մը, ուր անշարժ ծառեր են տնկուած. բայց ինչ հոգս, հո՛ն երթալ կ'ուզեմ, ուղղակի Զուիցերիա կը վազեմ:

Ժամանակ մ'ետքը, Հօրաս Միւլլէր Էյնսիլէտէն կը մտնէր, աւան Շուից նահանգէն:

Այդուց, քննական պտոյտէ մ'ետք, երկիրն իրեն հաճելի թուեցաւ: Կրնար հեշտեալ գտնել անդ տեսարաններ, հեղեղատներ, դարաւոր եղեւիներ եւ քարայծու որսորդներ, ամեն ինչ գունեղ:

— Ահա՛ ուսումնասիրելու շատ նիւթեր, կ'ըսէր:

Գործի սկսաւ եւ սքանչելի արդիւնք տուաւ: Իւր ուրուագիրք եւ գծագրութիւնք Գերմանիա ղրկուելով՝ քանի մը Փիօրինի կը գնուէին եւ դրամն իրեն կը ղըրկուէր: Դեռատի արուեստագէտին համար պէտք եղածն ալ այս էր՝ այդ նախնական երկրի մէջ ապրելու համար:

— Զմեռը Էյնսիլէտէն պիտի մնամ, ըսաւ դեկտեմբերի առաւօտ մը:

Գեղազուարճ բնութիւնը չէր միայն որ այս աւանին մէջ հաճոյ կը թուէր Հօրասին. Պէրթ, իւր տնկալչին աղջիկը, մանաւանդ կը գրաւէր զիւր սիրտ:

Պէրթ, տանեւինն տարու, խարտեալ էր ինչպէս զիւր անուն մերովինկեան, կապուտագեղ աչօք: Յայն օր երկու բանով միայն զբաղած էր. մաշած յարադաշնակ մը (clavecin) զոր կը նուագէր երգելով եւ ժառնեկի կարկահ մը որոյ օգնութեամբ օրական տասը քուէօցը(*) կը շահէր:

Հօրաս Միւլլէր զանի տեսաւ, անոր ըսաւ թէ գեղեցիկ է եւ թէ զինքը կը սիրէ: Այդ վայրկենէն սկսեալ, բաղցր ու գիրգ մանկամարդուհին նկարիչը միայն կը տեսնէր:

Օր մը, լեռանց մէջ ըրած սովորական արշաւէ մ'ետք, նկարիչը իւր հետ բերեր էր Ալպեան վարդերէն հատ մը, այն վարդերէ՛ որը կը փթթին լեռանց գագաթն, ձեանց մէջ:

— Պէրթ, ըսեր էր, ա՛ռ այս վարդը, քեզ կուտամ՝ զայն միանգամայն խօսք տալով քեզմէ զատ ուրիշ կին չառնուլ:

Մանկամարդուհին կորզեր էր այդ անգին վարդն, եւ զայն պահած էր սրնհամիական ապակեղէն ամանի մը մէջ. յետոյ, երբ թերթերը ժամանակն անցնելով չորցեր ու խամրեր էին, զանոնք մասունքի պէս հաւաքեր էր ոսկեղէն փոսիկ խաչին մէջ զոր իւր վզէն կախուած ունէր:

— Ալպեանց վարդն միշտ հետս պիտի ըլլայ, կը կրկնէր:

Բ.

Գերմանացի բանաստեղծ մը զրած է թէ երջանկութենէ շուտ կը ձանձրանայ մարդ. եւ զայդ ամեն օր կ'ապացուցանէ տխուր իրականութիւնը:

Երբ չքեղ գարունն եկաւ, երբ ապրիլի մանիչակն, իրեւ մեղեխիկ, իւր փաղփուռ հովանեակով երինեւրանգ կը զարդարէ մարդագետնոց կանանչագեղ խոտն, Հօրաս Միւլլէր մտախոհ կը դեգերէր Էյնսիլէտէնի շրջակայքը:

— Նկարիչ մը որ մեծ խորհուրդներ կը տածէ, չը կրնար միշտ սահմանափակուիլ մի եւ նոյն աւանին մէջ, կ'ըսէր ինքնիրեն: Անկասկած, հոս, աւանիս մէջ, յարկ մը կայ սիրելի որոյ ծխոյն բարձրանալը կը սիրեմ տեսնել. այդ տանեաց վրայ արագիլը նախապատիւ կը համարի դարիլ, կարծես վերին օրհնութիւն հայցելու համար. այդ ասպնջական պատուհանաց միոյն առջեւ կը տեսնեմ անուշիկ Պէրթիս հոհուն ու շնորհալի գէմքը: Այո՛, այս ամենը սքանչելի է, բայց արուեստն ալ սաստիկ սէր մը արծարծեր է սրտիս մէջ: Կը զգամ թէ յոյժ կարեւոր է գնալ քիչ մը հեռուն, ուսանիլ, կարճ բացակայութենէ մ'ետք կը վերադառնամ: Նթէ աւելի երկար մնամ հոս՝ այս երկրային դրախտն, Էյնսիլէտէն, բանտ մը պիտի դառնայ ինձ համար:

Յաջորդ օրն, մինչ դեռատի աղջիկն իւր կարկահին վրայ կ'ալխատէր, Հօրաս իրեն մօտենալով ըսաւ.

— Սիրելիդ իմ, մի՛ արտմիր քեզ ըսելիքիս վրայ: Պէտք է ժամանակ մը հեռանամ Էյնսիլէտէնէն. վեցամսեայ ուղեւորութեան մը համար պիտի մեկնիմ:

(*) Դրամ գերմանական ¹/₆₀ մասն ֆիօրինի.

Լսկոյն Պէրթի դէմքն այլայլեցաւ: Երկու արցունք թռան աչքերէն:

— Պիտի մեկնի՞ս, Հօրա՛ս, եւ վե՛ց ամսոյ համար: Բայց ինչո՞ւ այսպէս յանակոյն կալա կը թողուս այս երկիրը որ քու երկրորդ հայրենիքդ եղած է:

— Մեր երկուքին ապագայ չահը այսպէս կ'ուզէ, Պէրթ: Պէտք է ուսանիմ, եւ ուսանելէ ետք, պիտի ջանամ անուն մը վաստակիլ:

— Ամեն ոք գիտէ թէ տաղանդի տէր ես դուն, Հօրաս: Միթէ չէի՞ր կրնար էյնսիէտէնի մէջ համբաւ մը ստեղծել:

— Գաղղիան միայն, սիրելիդ իմ, Բարիդ մէկ հատիկ է ասոր համար, պատասխանեց նկարիչը:

— Ուրեմն Գաղղիա չուէ՛, Հօրաս: Բարիդ գնա՛, քանի որ անդիմադրելի մագնիս մը գրեզ կը քաշէ, պատասխանեց Պէրթ, ա՛լ չը ջանալով զպալէ արցունքը: Բայց վեցամսեայ բացակայութեանդ ատեն, չը պիտի մրոնաս այս աւանս յայտ հետէ անչուք, և հոն բնակողներն:

— Բնա՛ւ, պատասխանեց արուեստագէտն:

Ապրիլի վերջերն էր. մայիս կը մօտէր արդէն գեղածիծաղ, ծաղիլաւէտ եւ դալարագեղ:

Յաջորդ օրն, Հօրաս Միւլէր, մասնադն յուս, ցուպ ի ձեռին, աւանէն դուրս կ'ելնէր: Իւր ետեւէն կուգար Պէրթ որ արտասուալից աչօք կը հետեւէր նմա:

Լեռնային ճամբայներ մագլցելէ վերջ, բարձր լեռան մը կատարն հասան, որ իրենց առջեւ առաւօտեայ բնութեան մը գեղեցկագոյն տեսարանը կը պարզէր. բայց այս հեղու երկրքին եւս անդգայ կը թուէին յայն:

Միակ խորհուրդ մը կը պաշարէր զանոնք. — չու, բաժանում, բացակայութիւն:

Սակայն, հոն խզեցաւ վերջապէս խոր լռութիւնը զոր ցայն վայր պահած էին. նկարիչն փարեցաւ իւր խօսեցելոյն եւ ըսաւ անոր.

— Միթարուէ՛, Պէրթ, քիչ մ'ատեն միայն հեռու պիտի մնամ քեզմէ, ընդհուպ պիտի վերադառնամ եւ ա՛լ չը պիտի բաժնուինք:

Դեռատին Պէրթ բազկացը մէջ սեղմեց զայն եւ ջանալով արգիլել որ վիշտն չկարկէ լեզուն՝ պատասխանեց.

— Իսկոյն պիտի վերադառնա՞ս. ո՛հ, Հօրաս, Աստուած լսէ ձայնդ, զի երկարատեւ բացակայութիւն մը զիս կը մեռցընէ:

— Հոն, աւելցուց նկարիչը ցպին ծայրովը լեռան գագաթը ցուցնելով, հոն քեզ համար քաղցի, մշտակաց ձեանց մէջէն, Ալպեանց վարդն զոր քեզ տուեր եմ:

Պէրթ ոսկեղէն խաչն հանեց սեւ թաւիչէ ժապաւէնէն որ վզէն կախ էր, եւ անոր տուաւ:

— Երբեմն դիտէ՛ զայն, ըսաւ. ասոր մէջն է վարդը. քեզ թող խօսի իմ վրայ:

Անգամ մ'ալ գրկախառնեցան, եւ Հօրաս, ինքն ալ դժուարաւ զսպելով սրտաշուղթիւնը, սկսաւ լեռան զառիվայրէն իջնել:

— Վե՛ց ամիսէն, կը գոչէր հեկեկաձայն:

— Երթաս բարեա՛ւ, վեց ամսէն, կը կրկնէր Պէրթ աչքերովն անոր հետեւելով:

Գ.

Տասն եւ հինգ օր վերջ Պէրթի մօրն նամակ մը կը յանձնէին, որուն պարունակութիւնն այս էր.

« Ահա Բարիդ եմ, սիրելիդ իմ: Որպիսի՛ քաղաք. դժոխքն ու արքայութիւնն է միանգամայն. հոն շնչուած օդը կը վերածնէ կամ կը սպաննէ ըստ զօրութեան կամ տրակարութեան մարդոյ:

« Ոյժս չափեցի, վախճամ թէ չապրիմ. շատ չը տեւեր քու մօտդ կ'ըլլամ:

« Իբրեւ սկզբնաւորութիւն, ձեռնայարկի մը մէջ բնակեցայ, կղմիւտներուն տակ, աղքատաց նման. բայց այդ չէ գէշը. ապրիլ պէտք է, եւ չարաչար ու սպերախտ աշխատութեամբ մը միայն ապրիլ կարելի է: Հաղարաւոր դժուարին գործեր տուին ինձ, ժողովրդային ողբոց պատկերներ, վաճառականաց հաշուեթուղթերու զարդածաղկունք եւ խորհրդանշանք:

« Անօթութիւնը անտառէն գայլը կը փախցնէ», կ'ըսէ առած մը. նոյնպէս մոռցուց ինձ արհեստիս սուրբ համեստութիւնը. այդ ամենը ընդունեցայ ապրելու հա-

մար . — այո՛, հացով եւ ապուխտով, ինչ-պէս այնքան ընտրեալ հանճարք եւ փափկասուն անձինք :

« Ո՛հ, որքա՛ն կը գղջամ վայրկենապէս թողելուս համար Շուրջը եւ իւր հեղեղատն, եւ իւր ծառերն, եւ իւր քարայծեմունքն, եւ իւր սքանչելի լերինքն :

« Պէ՛րթ, սիրելի նշանածս, ընդհուպ ըեզ պիտի բերեմ ոսկի խաչն յոր պահած ես Ալպեանց վարդն : »

« ՀՕՐԱՍ »

Այս անակնկալ նամակը կարդալով, Պէրթ սկսաւ դարձեալ լալ . բայց այս հեղու երջանկութենէն էր :

— Պիտի գայ, կը խորհէր :

Ամառն իւր վեհափառ գեղով կը փայլէր :

Ամէն առաւօտ, երբ նորածագ արշալոյսը մեղմիկ կը փայտայէր ծառերն որք իբր գօտի կը ջրմապատեն էյնսիէտէն աւանը, Պէրթ իր մայրը չարթնցնելու համար անձայն ու անշուշտ կը հագուէր, եւ եղնիկի մ'արագութեամբ կը սլանար կ'անցնէր այն միջոցը որ զինք կը բաժնէր նկարչին հրաժեշտ տուած տեղէն : Երբ հոն կը հասնէր, յարդէ թեթեւ գլխարկը կը հանէր, յետոյ իւր ակնարկն անդադար կ'ուղղէր այն զանազան ճամբայներն ուստից անցեր էր իր խօսեցեալն :

— Սա՛ կողմէն պիտի գայ Հօրաս, կը միմուար, եւ քիչ ատենէն, այս շարթու, թերեւս վաղը :

Ամիս մ'անցած էր, երբ ուրիշ նամակ մ'ալ եկաւ Բարիգէն : Ահա անոր պարունակութիւնը .

« Ո՛չ, երկար չը պիտի մնամ այս հիւրատեաց երկիրը : Ծեր Հրեայ մը, Պրիկս անուն, ձեռնայարկս եկաւ զիս տեսնելու, եւ զիս աղքատ տեսնելով՝ գծադրութիւններս սակարկեց : Ի՞նչ գին կ'ուզէք, հարցուց :

— Երեք հարիւր Փռանդ : — Արաւ ծիծաղիլ : — Ա՛ռ, աւելցուց, ահա երեսուն Փռանդ, եթէ խելքդ գլուխդ է, կը փութաս ընդունիլ, եթէ ոչ՝ չեմ գնէր : Առաւ պատկերներս եւ մեկնեցաւ ըսելով . — Ազէկ առեւտուր մ'ըրիր, ես քու համբաւդ պիտի տարածեմ :

« Պէ՛րթ, այս մարդն ու այս գործը լաւ ազդեցութիւն չըրին վրաս, պէտք է երթամ շնչեմ Ալպեանց անապակ օդն : »

« ՀՕՐԱՍ »

Երեք օր ետք նոր նամակ մը :

« Անպիտան Հրեայն իրաւ էր, ամեն տեղ հոչակեր է թէ տաղանդի տէր եմ . պատկերներս քննել են, զիս կը փնտռեն, քիչ մ'առաջ հաղար Փռանդի պատկեր մը յանձնարարուեցաւ :

« Առժամապէս տեղս եմ : Քիչ ատենէն, սիրելի Պէրթս : »

« ՀՕՐԱՍ »

Ութ օր ետքը չորրորդ նամակ :

« Ո՛հ, Պէրթ, Բարիգը զրպարտեր էի : Ահա քաղա՛ք մը, ահա վե՛հ սրտեր, ահա աշխարհին մէջ միակ տե՛ղն ուր արհեստին յարգը կը ճանչնան : Ամեն ոք ինծի կու գայ . ի տես իմ, բոլոր թղթապանակները կը բացուին, ամէն մարդ կ'ուզէ իմ գործերէս դնէ հատ մ'ունենալ : Հիմա Շօսէ տ'Անթէն կոչուած ճոխ թաղի մը մէջ յոյժ գեղեցիկ տուն մը կը բնակիմ :

« Պէ՛րթ, յոյժ սիրեցեալդ իմ Պէրթ, ներկայիւս կը յղեմ ըեզ նոր ոսկեայ խաչ մը ադամանդակուռ : »

« ՀՕՐԱՍ »

Այս ընծայն առնելուն՝ Պէրթ աշխան տերեւի մը պէս կը դողար :

— Զիս պիտի մոռնայ, կ'ըսէր :

Նորանոր նամակներ ծանուցին թէ Հօրաս հաստատապէս յարգի նկարիչ մը կ'ըլլար, եւ թէ, հետեւապէս, ա՛լ չէր ջանար կարճել իւր բնակութիւնն ի Բարիգ :

Պէրթ մտախոհ կը թուէր :

Օր մ'ալ մտաւտանջութիւնը իւր գիմաց վրայ նշմարուեցաւ :

— Ահա վեց ամիսն անցաւ, կ'ըսէր, վերադարձած ըլլալու էր : Ո՛վ կ'արգիլէ զինքն : Խեղճ աղջիկ, գեռ կրնար լալ : Բայց սոսկալի գաղափար մը ծնաւ մտացը մէջ :

— Ուրիշ կնոջ մը հանդիպած ըլլալու է : կը տիրէ եւ ա՛լ զիս չը խորհիր :

Բոլոր կանայք գողտնի բնաղբում մ'ունին, որ Բարիգը իրենց կը պատկերացնէ լի հրապուրիչ կանամբք առաւել քան հնոյն Սիկիլիոյ մէջ : Ապաքէն այդ մեծ քաղաքն որպիսի զմայլում կը չռայէ երիտասարդի մը, նկարչի մը, որ նորածին փառքի մը պսակով արդէն փառաւորուած է : Տօներ, պարահանդէսներ, թատրոններ, երեկոյթներ, այնքան զմայլելի կղզիներ են ուր Կիրկէ անդադար կը կերպարանափոխի, դեռահաս մոքերն իւր սիրադեղերով արթնցնե-

լու համար : Ժամանակակից սերնդեան բո-
լոր պերճաշուք մարդիկը քիչ շատ անկէ
անցնելով՝ դադար առած են հոն , բայց
երբ դուրս ելնել ուզեր են՝ զգացած են
թէ կորովամտութիւն եւ հանճար կորու-
սած են :

Այն օրէն ետք , ա՛լ չը լացաւ Պէրթ ,
բայց կը տեսնուէր որ իւր այտերը գեղեց-
կութենէ կը մերկանային , չրթունքը կը
գունատէին , կապուտադեղ աչկունք կը
մարէին :

Պէրթ , լեռնակեաց աղջիկն , հովտեմբե-
րի մէջ երեկոյ մը մեռաւ :

— Բան մը միայն կը խնդրեմ , ըսեր էր .
յետին չունչս փշէլէ վերջ Ալպեանց վար-
դենի մը տնկեցէք հողակոյտիս մօտ ընդ ո-
րով պիտի հանդէսիմ :

Դ.

Ի՞նչ եղեր էր Հօրաս Միւլլէր , նկարիչն :
Աւա՛ղ , համբաւն ոչ նուազ քմահաճոյ քան
զբաղդն , առաւօտ մը անոր ձեռքէն բռնե-
լով սկսեր էր զեղծ մանկան պէս վարուիլ
անոր հետ : Ամեն ոք կը փայփայէր զար-
ուեստագէտն , բայց իւր սրտին պարզու-
թիւնը տակաւ կ'անհետէր . կը տեսնէր որ
ոսկին , պատուոյ ժապաւէնները , լրագրաց
գովեստները , կանանց ժպիտը կը տեղան
իւր շուրջը , արուեստանոցին մէջ . բայց յա-
ջողութեան արբեցութիւնը աւելի շատ կը
քանդէ քան անջրութեան դանդաղ տան-
ջանքը . ինքզինքը վաղահաս ծերութեան մը
մատնեալ կը զգար :

— Ո՛հ ձիւնապատ լերինք Ալպեան , ե՞րբ
զձեզ պիտի տեսնեմ , կը գոչէր :

Դառնանք առ Պէրթ :

Խեղճ աղջկան մարմինն ամփոփուեցաւ
կուսին դերեզմանատունն , Էյնսիէտէլն ա-
ւանէն քմերի մը քայլ հեռու :

Պէրթի ննջած տեղն որոշելու եւ ամեն
օր ողբալու համար մայրը սեւաներկ խաչ
մը , կամրածառ մը եւ վարդենին տնկեց
հոն :

Չմրան սկիզբը օտարական մը տժգոյն
եւ խորհմեալ դիմօք , խեղճ աղջկան տան
դուռը բաղկեց :

— Հօրասն է , ըսաւ մայրն արտասուօք
թանալով իւր աղջկան ժանկի կարկա՛ր :

— Պէրթ , ո՞ւր է Պէրթ , հարցուց նկա-
րիչը :

Պառաւն աչքը երկինք վերցուց , այլ
յետոյ Հօրասին ձեռքէն բռնեց եւ լռիկ
տարաւ դայն կուսին դերեզմանատունն :

— Աստ կը հանդէլի Պէրթ :

Հօրաս ձեռքերով ծածկեց դէմքն եւ
ծնրադրեց :

Նոյն պահուն Ալպեանց վարդ մը , որ գե-
րեզմանափոխին վրայ ծաղկեր էր , մեղմիկ
դետինն ինկաւ :

ՖԻԼԻՊԷՌ ՕՏԸՊՈՒԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՄՇԵՑԻՈՑ ԵՐԳԵՐ

Նա նա , նա նա

Ջա նա նա նա

Կիտուր¹ եկաւ հասաւ խոփեր²

Կերաւ ցորէն մնաց չփեր :

Հաւար կիտուր . մատաթ³ կիտուր ,

Ամէկ⁴ արտուց քիլէ մ' տուր .

Աշուն կ'անինք⁵ ձաւար պըլլուր ,

Ուր⁶ չ'կանենք⁷ տուշմինի դուռ :

Երկինք ամպեց , Կիտուր թափեց ,

Կիտուր թափեց , զ'արտեր լափեց .

Յորեն չ'եղաւ շահնէն⁸ չափեց .

Հաւար Կիտուր եւայլն :

Մեռնիմքըղի սըրք Կարապետ ,

Ըմէն⁹ սըրքերու զօրապետ .

Քօսէն¹⁰ մատաղ կանչեց դիւր ճիւղ¹¹ ,

Կիտուրն եկաւ ԹրԹուրն ի հետ .

Հաւար Կիտուր եւայլն :

Դդում¹ կ'ըսէ հովկըթով եմ¹²

Բաղուկ կ'ըսէ ես համով եմ .

Շաղգամ¹³ կ'ըսէ ես խռով¹⁴ եմ .

Ձմերուկ կ'ըսէ ջանէս¹⁵ հով¹⁶ եմ .

Կամբետ կ'ըսէ խելքես ծով եմ ,

Պաղտեղ¹⁷ կ'ըսէ ուրացող եմ .

Դդում¹ կ'ըսէ ես փփուկ¹⁸ եմ ,

Խիլար կ'ըսէ ես թաքուկ¹⁹ եմ .

Բանկէն²⁰ կ'ըսէ ես չքուկ²¹ եմ ,

Նազուկ²² մատներով հնարուկ²³ եմ :

Հասաւեց

Մ . ՍԱՐԳՆԱՆ

1 Մարախ 2 Գիւղ մը Մուշէն երկու ժամ հեռի
ի հիւսիս 3 Մէտէտ 4 Ամենմէկ 5 Կ'ըսենք 6 Որպէս
զի 7 Չկային 8 Կառավարութեան տասանորդի մի
պաշտօնեայ որ կարբու ցորեանը կը չափէ . (ըսել է
որ ցորեան չեղաւ , բայց տասանորդի տուրքէն դարձ-
եալ ազատ չեղանք) 9 Բոլոր , ամենայն 10 Սնպէն
անմորուս մարդ 11 Աբաղաղ 12 եմ 13 Շողգամ
14 Սըրողած , քէն 15 Մարմնովս , ինքնէս 16 Չով
17 Տաք դեղ , պղպեղ 18 Պահոււրտած 19 Բակլայն
20 Խրուած 21 Փափուկ 22 Ընտրուած 23 Ուռած ,
փքուած :

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ՄԱՀՐ ՅԱԻ ԿԸ ՊԱՏՃԱՌԵ՞

Անգլիացի նշանաւոր բժիշկ մը, Տորթոր Պիրսոնէյ, կը հարցնէ ինքն իրեն թէ ի՞նչ է պատճառն որ մարդկութիւնն համայն այնքան երկիւղիւ կը դիտէ մահն: Ահգրակացնէ թէ, կենդանի էակաց մէջ գտնուող ինքնապահպանութեան տիեզերական բընազդման հետ, սա ընդհանուր կարծիքն է նաեւ թէ մահը սովորաբար սոսկալի ցաւ կը պատճառէ: Եթէ պէտք է հաւտալ իրեն, այդ կարծիք բողոքովն անհիմն է: Մահը բազմաթիւ պարագայից, թէ ոչ ամեն պարագայից մէջ, լոկ բուսական գործողութիւն մ'է: Մարդն, ըստ նորա բացատրութեան, կ'իյնայ որպէս թուումած ծաղիկ մը: Եթէ գիտնար թէ այս դէպք ո՞րքան քիչ ցաւ կը պատճառէ, անոր գալուստը պիտի դիտէր ոչ թէ սոսկամբ, այլ յաճախ հաճոյքով, կամ գէթ հետաքրքրութեամբ:

Պէտք է նկատել թէ բժիշներու զգայականութեան աստիճանը սովորաբար համեմատական է իրենց անապակութեան: Բորբոքումն որ նախ եւ առաջ կ'աճեցնէ այդ զգայականութիւնը, վերջապէս կը նուաղի եւ ծերութիւնը կը ջնջէ զայն: Մեռնելի ամեն արգելքի արդիւնքն է խանգարել անհատին ընդհանուր բարեկեցութիւնը, մինչեւ որ արեան տկարացումէն յառաջ եկող բնածխական թթուն հաստատուի կենդանական տարերաց մէջ կամ դադրի տեղափոխուելէ: Քիչ յետոյ, այդ թոյնին ազդեցութեամբ, զգայական կծիկները կը կորսնցնեն իրենց գրգռելիութիւնն եւ կը դադրին փոխանցելէ ջրային հոսանքները: Այն ատեն է որ մահը կը հասնի:

Ջրային զօրութեան ջնջման յառաջդիմութեան միջոցին, որ տակաւ առ տակաւ վերջնական թմրութեան կը տանին, մարդ կրելու է զգացում մը նման անոր զոր կը կրէ ննջելէ առաջ, եւ, փոխանակ չարչարանաց եւ անձկութեանց զորս ռամիկն կ'երեւակայէ, տեսակ մը խորին գոհունակութիւն: Յոյժ հաւանադար, ափիոնի, եթերի եւ ամեն ընարեր դե-

ղերու գործածութեամբ յառաջ եկած տըպաւորութիւնը շատ կը մօտենան մեռելոյն տպաւորութեանց: Եթէ ի բաց առնունք զառանցումներն որք երբեմն ծնունդ կ'առնուն ուղեղին անկատար գործունէութեանէն, այդ տպաւորութիւնը չեն կրնար ցաւագին բան մ'ոռնենալ: Բնածխական թթուն թունաւորած, անզգայացուցած է բժիշներէն շատը. յետադարձ գործողութիւնը անհնար են, ընդհանուր ընդարմացումը կ'սկսի տիրել:

Մնաց որ, ցաւի զգացումը չկրնար գոյութիւն ունենալ: Արդարեւ ջրային կեդրոնները գրգռելի լինելու համար հարկ է որ սովորական վիճակի մէջ գտնուին: Այն վայրկեանին որ իրենց գործունէութիւնը կանգ կ'առնու, ցաւը ֆիզիքապէս անհնար կը լինի:

Փորձը լիովին կ'ապացուցանէ այս տեսութիւնները: Անդամահատութիւնը, ինչպէս նաեւ վկայութիւնն այն անձանց որք, մեռած կարծուելէ յետոյ, ի կեանս վերադարձած են, եւ այս մասին իրենց ուղղեալ հարցմանց պատասխանելու վիճակի մէջ գտնուող օրհասականաց հաստատութիւնը ցոյց կուտան թէ մահը բնաւ ցաւագին չէ: Պըրնէյ ուժգնապէս կուռեցաւ անոնց դէմ որք կը ջանային վերակենդանացնել զայն իւր ջրասոյզ լինելէն յետոյ, այնքան հրապոյր կը գտնէր իւր շնչեղծութեան վիճակին մէջ: Նշանաւոր ուղեւոր Սոլանտէր չափազանց ցուրտի զգայնութիւնը այնքան հեշտալի գտած էր, որ իւր խմբին մէջ առաջինն եղաւ ձիւնին մէջ պառկող, այդ կերպիւ մեռնելու համար: Ուրիշը՝ շնթըր մեռնելէ առաջ կը ցաւէր որ չէր կարող գրել թէ «ի՞նչպէս դիւրին եւ հաճոյական է անդիւ աշխարհը երթալ»: Մանկունք կը մեռնին այն հանդարտութեամբ որով կը ընանան, որքա՛ն ծերունիներ եւ անկարներ պարտէին նկատել մահն իբր ազատարար: Կախումն խաչելութիւնն իբր ամենասուկալի չարչարանք կը նկատուին: Սակայն այդ կէտերէն անցնելէ յետոյ ապրողներու յայտարարութիւններէն կ'երեւի թէ յոյժ կարճ ոգեւարէ մը յետոյ անմիջապէս կը յաճորդեն ամենահեշտալի երազներ:

Վերջապէս, կարելի է եզրակացնել թէ մահն այնքան քիչ ցաւագին է մարդուն հա-

մար որքան ծնունդն : Շէյքսպիր հասկցած էր զայն , այն օրն յորում ըսաւ թէ մահուան երկիւղը մանաւանդ անծանօթին երկիւղին մէջ կը գտնուի : Մենութեան եւ զիջերոյն մերձենալն է , եւ ոչ թէ մարմնոյն չարչարուիլն որ մեզ սովորաբար տաժանելի կ'ընծայէ այդ անխուսելի մեկնման գաղափարը :

ՀԱՍԿԱՔԱՂ

Ք Ա Ղ Ո Ի Ա Տ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

18-24 ՄԱՅԻՍ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Վերթոր Հիւկոյի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ անցեալ երկուշաբթի օր ի Փարիզ , այնպիսի փայլով մը եւ այնպիսի խուռն բազմութեամբ որք ցարդ ո'չ տեսնուած ո'չ լուսած էին :

— Վիէնայէ մայիս 31 թուով քաշուած հեռագիր մը կը հաստատէ մայրաքաղաքիս մէջ հրատարակեալ լուրերը թէ յուզում մը կը տիրէ Պաքստանեան թերակղզւոյն այլ և այլ կողմերն , և այս յուզում հոգ պատճառելու բնութիւն ունի : Այսպիսիացիք նոր արշաւանքներ ըրեր են սերպիական հողին վրայ : Պաղարաց հրոսախումբ մ'ալ չարիք գործեր է ի Մակեդոնիա , մինչ Հելլեն ասպատակներու ուրիշ խումբ մը տեսնուեր է նահանգին ուրիշ մի կէտին վրայ :

— Բեդրսպուրկէն կը հեռագրուի թէ Քիւէվի նահանգին մէջ ռազմադիտական նոր երկաթուղի մը պիտի շինուի , և մշտական բանակետը մը պիտի հաստատուի ի Կինիքովա :

— Բեդրսպուրկէն կը հեռագրուի նաեւ թէ Սլաւական Բարեգործական Ընկերութիւնն իւր վերջին նստի մէջ որոշած է զըրամական մեծ պարգեւ մը տալ լաւագոյն երկին որ խօսի Ս. Մէթոտ և Ս. Կիւրեղ Առաքելոց կատարած քաղաքական դերին վրայ : Պատկեալ երկին հեղինակը պարտի միանգամայն քննել ամեն սլաւ ժողովրդոց համար միակ լեզուի մը հարկաւորութեան խնդիրը :

— Ձարն և Ձարուհին ի մօտոյ Քորէն-

հակ կ'երթան , յայցելութիւն Տանիմարքա ի Թագաւորին :

— Պաշտօնապէս կը հերքուի խալական գլխաւոր թերթի մը հրատարակած հեռագիրը , ծանուցանող թէ Սպանիոյ երիտասարդ Ալֆոնս Թագաւորն , որ թոքախտէ և ջղացաւէ կը տառապի , ինքնասպանութիւն փորձեր է :

— Քորէսիոն Բուէրթէ կը հաւատէ թէ ռուս դահլիճը մտադիր է Նեղուցներու խնդիրն յարուցանել ի մօտոյ :

— Հռոմի Առողջապահական Միջազգային Դեսպանաժողովը կարեւորութիւն կը տանայ : Մաքրանոցի (Քարանդինա) պահպանման և ջնջման կուսակցաց միջեւ սաստիկ վէճ կայ : Անգլիա և Միացեալ Նահանգք Մաքրանոցի հակառակ են , բայց մեծամասնութիւնը նպատատու է : Անգլիոյ և Հնդկաստանի պատուիրակը չեն ընդունիր թէ Ներոպիոյ մէջ պարբերաբար ճարակող հնտախտն Հնդկաստանէն կուգայ , բայց մեծամասնութիւնն այս մասին ևս տարակարծիք է : Դեսպանախորհրդոյ մասնախումբն , անգլ. պատուիրակին կարծեաց հակառակ , ընդունեց առաջարկ մը , որ կը հրամայէ ի Սուէզ բժշկային քննութեան ենթարկել ամեն նաւեր որք կուգան վարակեալ նաւահանգիստներէն , — մինչ անգլ. պատուիրակը , պնդելով թէ հնտախտն Հնդկաստանէն չի գար յՆերոպ , կը պահանջէր որ ամեն տեսակ նաւեր ազատ եւ անարգել անցուղարձ ունենան Սուէիզի ջրանցէն եւ Եգիպտոսի ջուրերէն :

— Վիէնայի լրագիրք կը հաստատեն թէ Բ. Պուռը կ'երազացնէ Դարգանելի ամլութեանց շինութիւնն և նորոգումը : 800 Քրիւբի թնդանօթ յանձնարարած է , և Վոսիւորի բերանին բարձանց վրայ եւս 60 նոր թնդանօթք պիտի հաստատուին :

— Անցեալ չորեքշաբթի կատարեցաւ Բեդրսպուրկէն ի Պալթիկ ծով տանող ծովային ջրանցին բացման պաշտօնական արարողութիւնը : Վահ. Կայսրն ու Կայսրուհին հանդերձ ընտանեօք զրահաւորով մը գնացին Բեդրսպուրկէն մինչեւ Քրոնշտատ , ի ձայն հարիւրաւոր թնդանօթաց և մեծ հանդիսի : Քրոնշտատի առջեւ հարիւրէ աւելի մեծ ու փոքր զրահաւորք համախմբեալ էին նոյն առթիւ : Բեդրսպուրկ այսպէս

ծովային յոյժ լաւ պաշտօնականաւ քաղաքի մը կերպարան կ'ստանայ, ցորչալի սառույց չկայ Պալթիկ ծովուն մէջ :

— Ֆրանսայի Երեսփոխանաց ժողովը վաւերացուց Եգիպտոսի Եւրոպական Պայմանագիրը :

— Անգլիա եւ Ռուսիա համաձայնած են իրաւարարի պաշտօն յանձնելու Տանիմար-քայի թագաւորին :

— Մատրիտէ առնուած լուրերը կը ծանուցանեն թէ Վալէնշիոյ գաւառին մէջ հետախտը կաճի : Յունիս Յի օրուան մէջ հետախտի չորս դէպք պատահեր են :

— Դամատավէ (Մատակասքար) տրուած լրոց նայելով, Հովայից Թագուհւոյն նախարարապետը խեղդամահ եղած է ձեռամբ անոնց որք Ֆրանսայի հետ խաղաղութեան կնքման կուսակից են :

Ն Ե Ր Ք Ի Ն

Այս կիրակի օր Վեհ. Սուլթանի ծննդեան տարեդարձին առթիւ բոլոր նախարարք, կրօնական, քաղաքային եւ ղինուորական բարձրաստիճան պաշտօնատարք Եւրոպի պալատը փութացին շնորհաւորելու համար զՆ. Կ. Վեհափառութիւնն :

Վեհ. Սուլթանն՝ երկրորդ Սենեկապետ Հաճի Ալի Պէյի միջոցաւ իւր բարեւները դրկելով, իւրաքանչիւրին աստիճանին համեմատ որակիտութիւնին հարցնել տուաւ :

Նախարարք միջօրէի ճաշը կայս. պալատան մէջ ըրին, եւ Վեհ. Սուլթանն, իբր մասնաւոր համակրանաց եւ հողածութեան նշան մը, բարեհաճեցաւ ելակ եւ շաքարեղէն զրկել սեղանին :

Գիշերը լուսավառութիւնը կատարուեցան մայրաքաղաքի ամեն կողմերը : Պոլիս, Բերա եւ Վոսիւորի ափունքն անհամար կանթեղներով զարդարուած էին : Իսկ ամենէն աւելի հիացում կը պատճառէր Եւրոպի պալատան հանդէպ դառնուող հանրային պարտէզն որ չքեղապէս լուսազարդուած էր : Մօտակայ բոլոր դիւղերէն ու Բերայէն բազմաթիւ ընտանիքներ փութացած էին

պարտէզն ուր ղինուորական նուազածուաց ընտիր խումբ մը նուազեց մինչեւ կէս դիշեր եւ գեղեցիկ հրախաղութիւնք կատարուեցան :

Մայրաքաղաքիս բոլոր մզկիթներն եւ երեւելի շէնքերն, ինչպէս նաեւ բարձրաստիճան պաշտօնատարաց ապարանքները լուսազարդուած էին . օտար վաճառականաց նաւերն այս տարի արտասովոր կերպով զարդարուած կը փայլէին նաւահանգստին մէջ :

Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ իւր ծննդեան տարեդարձին առթիւ ազատութիւն շնորհել մաս մը բանտարկելոյց, որք իրենց պատժոյն երեք չորրորդ մասը քաւած են, ինչպէս նաեւ ուրիշ 75 անձանց, որք վեց ամիս պարտ էին բանտը մնալ :

— Հանրօգուտ ղինութեանց Յանձնաժողովոյ անդամ եւ երբեմն Արտաքին գործոց նախարար Սափա փաշա, անուանեցաւ կուսակալ Արէտէի եւ ուղեւորեցաւ յիւր պաշտօնատեղին :

— Վերթոր Հիւկոյի մահուան առթիւ, Վեհ. Սուլթանը ցաւակցական հեռագիր մ'ուղղած է մեծանուն Քերթոլին ընտանեաց :

— Ռուսոյ-աֆղանեան սահմանագլխոյ անդլ. պատուիրակ զօրավար Սըր Բէթէր Լըմստէն Պաթումէն մայրաքաղաքս եկաւ եւ երեք օր անդլ. ղեսպանատունը մնալէ յետոյ, մեկնեցաւ ի Լոնտրա :

— Թաղապետական պաշտօնեայք դատ բացեր են Հաֆէթ Լրադրոյ դէմ որ խըմբադրական յօդուածներով խտրել քննադատած էր յիշեալ պաշտօնէից ընթացքը մին դնոյն արտասովոր բարձրացման առթիւ :

— Դատական նախարարութեան պաշտօնատան մէջ հիմնեալ Իրաւագիտական վարժարանէն առաջին անգամ լինելով երեք ուսումնաւարտք անցեալ չաբթու մէջ վկայագիր ստացան իբրեւ առաջնակարգ փաստաբանի :

Սըբա եւ, Ատանացի Սարգիս Էֆէնտի Ճիէրմեան, Տիարալէքիւրցի Բէճայի Էֆէնտի (հայ) եւ Ադրիանուպոլսեցի Գոսթաքի Ալեքսիատէս Էֆէնտի :

Անցեալ տարւոյ ուրիշ ուսումնաւարտք

եւս վարդիւր պիտի ստանան հետզհետէ . բայց դատարանաց մէջ վեցամեայ ձրի պաշտօնավարութեան պայմանաժամը լրացուցած չեն տակաւին :

— Սամսի նորընտիր կուսակալ Քարաթէֆօրի փաշա իւր պաշտօնատեղին հասու կիրակի օրը եւ մեծ պատուով ու համակրական ցոյցերով ընդունուեցաւ կղզւոյն բընակչաց կողմէն :

— Այտնի գաւառական լրագիրը կը ծանուցանէ թէ Մէնթէշէի կառավարիչը ծանուցած է կուսակալին թէ տարախոխիկ հիւանդութիւն մը ծագած է Պաղլը-Քարա-Աղաճ գիւղին մէջ որ. 150 բնակիչ ունի եւ Անթալիայի Քաշ գաւառակին մէջ կը գտնուի . տասն եւ հինգ օրուան մէջ այդ հիւանդութեան բռնուեր են 64 հոգի որոց կէսը մեռեր են : Առողջապահական շրջայ մը հաստատուած է հիւանդութեան ծաւալումն արգիլելու համար :

Բժիշկները կը հաստատեն թէ հիւանդութիւնը ծագում առած է անդեղութենէ :

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ազգ. Ժողովոյ 85-86 տարւոյ նստաշրջանի առաջին նիստը տեղի ունեցաւ երէկ, եւ բացման ճառէն յետոյ՝ զոր Ամեն. Ս. Պատրիարք հայրն արտասանեց, ժողովը ձեռնարկելով Մայր Գիւանի ընտրութեան, հետեւեալ կերպիւ կազմեց զայն .

Տիգրան էֆ. Եղսուֆեան	Ա. Ատենապետ
Յովհաննէս Թորոսեան	Բ. »
Տօքթ. Յ. Թրեաքեան	Գ. »
Յակօբ	» Գուրգէն
Մինաս	» Չերազ
Մկրտիչ	» Մելիքեան

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երեքշաբթի օրը դատական պաշտօնատեղն երթալով տեսակցեցաւ պատական եւ կրօնական գործոց նախարար Վսեմ. Հասան Գէհմի փաշայի հետ :

— Երեք օր առաջ Տրապիզոնէն ի Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէր թէ Ամեն. Խրիմեան Հայրիկ անդ հասեր է :

— Հրէից Խախմատպետը նախընթաց

օրը մեր աղգ. Պատրիարքարանը գալով այցելութիւն տուաւ Ս. Պատրիարք Հօր եւ շնորհաւորեց Ն. Սրբազնութեան բարձր պաշտօնը :

— Երուսաղեմէն մեզ հասած նամակէ մը ցաւօք կը տեղեկանանք թէ Ամեն. Նսայի Սրբազան տակաւին անկողնոյ կը ծառայէ իւր ծանօթ հիւանդութեան պատճառաւ :

— Վանէն եկած մասնաւոր հեռագիր մը լուր կուտայ թէ կիրակի օրը Եկեղեցեաց մէջ Կաթողիկոսի անունն յիշատակուած է Ս. Պատարագի միջոցին, փոխանակ էջմիածնայ Կաթողիկոսի անունն :

— Կը լսենք թէ եկեղեցական երեսօխօխանայ ընտրութեան միջոցին՝ որ կատարուեցաւ անցեալ հինգշաբթի, քուէարկութեան մէջ ներդուլիւն եւ խարդախութիւն գործեր են երկու եկեղեցեացանք, որոց մին քուէներն արձանագրելու եւ միւսն այդ արձանագրութեանց վրայ հսկելու պաշտօն ունէին :

Ընտրողական Ժողովը վերահասու լինելով գործուած զեղծմանց, ճշգրտ է քուէներն եւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը խընդիրը Կրօնական Ժողովոյ յղեր է ի պարտ ու պաշտած տնօրինութիւն :

Երկուշաբթի օրը գումարեալ Կրօն. Ժողովն ստուգելով գործուած խարդախութիւնն, իբր պատիժ որոշած է համեմատական ցանկէն դուրս թողուլ այդ եկեղեցականներէն միոյն անունն . իսկ գալով միւսին, ինչ ինչ նկատումներով որոշեր է գթութեամբ վարուիլ եւ նորա համար ո՛ր եւ է պատիժ չէ տնօրինած առ այժմ :

— Կը լսենք թէ Նիկովիդիոյ առաջնորդ Գեր. Տ. Ստեփան Ծ. Վարդապետ Յովսէփիմեան բաւական ատենէ ի վեր իւր վիճակներն այցելելով ազգօգուտ շինութեամբք կ'ընտան : Այժմ կը գտնուի Շաղ-Շաղ առնուն փոքրիկ հայաբնակ գիւղն, ուր շինել կուտայ հողմաղաց մը, որ 50-60 ոսկւոյ եկամուտ մը բերելով, զպրոցին վիճակը պիտի ապահովէ : Աղքատիկ Շաղ-Շաղցիք հետեւելով իւրեանց առաջնորդին բարի օրինակին, անխնջ կ'աշխատին օր առաջ ի կատար հանելու համար հողմաղացի շինութիւնը : Ն. Գերապոստոսութիւնը ձեռնարկած է նաեւ վարժարաններ կառուցանել ի Միջագիւղ Պաղարու, եւ ի Նալաբաշէի :

ուր վարժարանաց շէնքերն հինցած էին : Գիշատենէն այս շինութիւնները լմնցնելով Գեր. Ստեփան վարդապետ պիտի երթայ Խէնտէկի «Հայոց Գիւղն», ուր նորոգ եկեղեցւոյ մը շինութեան պիտի ձեռնարկէ : Սոյն գիւղը Տրապիզոնի կողմերէ վերջերս եկած հայ գաղթականներէ կազմած է նոյն ինքն Նիկովիդիոյ Առաջնորդն, եւ զայն յորջորջած է «Հայոց Գիւղ» :

— Պ. Կ. Յակոբեան Լոնտոնաբնակ ազգայինն, Թայֆի մայիս 26 թուոյն մէջ հրատարակած է ընդարձակ յօդուած մը, պատմելով Երուսաղէմէ ի Կ. Պոլիս փառաւոր ուղեւորութիւնն Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքի, որոյ ընտրութեան վրայ յառաջագոյն գրած էր : Պ. Յակոբեան կը նկարագրէ Իզմիրի Հայոց պատուարներ ընդունելութիւնը նորընտիր Պատրիարքին : Էֆէսոյի եւ Ժէֆէթի ուղեւորութիւնը, Պատրիարքական հաստատութեան արարողութիւնները, Ն. Սրբազնութեան զանազան առիթներով արտասանած խօսքերն եւ սահմանադրական երդումը : Պ. Յակոբեան ապա կը խօսի կաթողիկոսական վերջին ընտրութեան վրայ . կը հաստատէ միաձայն ընտրութեան ազգային նշանակութիւնն . Ընտրելոյն բացառիկ արժանիքը, վայելած ընդհանուր համակրանքը, Համագումար ժողովոյ մէջ անցեալ տարի արտասանած նշանաւոր բանախօսութիւնն, ընտրութենէն ի վեր ստացած շնորհաւորութիւններն, եւ ի վերջոյ կը յայտնէ Հոյ Ազգին յոյսը թէ Զարը պիտի հաճի փութեացնել Ն. սրբազնութեան ընտրութիւնը :

— «Ներսէս վարժապետեան» Ուսումնարանի Ընկերութեան Ընդհանուր Ժողովն իւր վերջին նստին մէջ որոշած լինելով արդէն ստորագրուած հանգանակութենէ գանձուած գումարներն հետզհետէ Ղալաթիոյ կալուածոց Հոգաբարձութեան յանձնել ի վճարումն պարտուց, այս առաջին վճարումը կատարեց, 625 օսմ. ոսկի յանձնելով յիշեալ Հոգաբարձութեան Գանձապահին :

Ահաւասիկ նուիրատուաց ցուցակն .

Մեծ. Տեարք

Էսաեան Եղբարք	200 օսմ. Ոսկի
Նիւլպէնկեան Եղբարք	100 » »
Ունճեան Եղբարք	100 » »

Նորատունկեան Յ. եւ Յ.	100 օսմ. Ոսկի
Ս. Զուհը	50 » »
Հաճեան Եղբարք	50 » »
Ն. Հարէնց	25 » »

Գումար 625 » »

— Վանայ Գաւառական Ժողովոյ Գիւմնէն եւ այլ պատուաւոր աղջայնոց ստորագրութեամբ հետեւեալ շնորհաւորական հիւադիրն ուղղուած է առ Տ. Մէլքիսեդէկ Սրբազան .

ՎԱՆ, 14/26 մայիս 1885

Ամենապատիւ Տ. Տ. Մէլքիսեդէկ Սրբազան Մուրատեանց, բարեխնամ Առաջնորդ Զմիւռնիոյ .

Լիակատար ցնծութեամբ կը շնորհաւորենք Ձեր բարձր Սրբազնութեան ամենափայլ ընտրութիւնն ի դահ հայրապետութեան ամենայն Հայոց : Վանայ Ժողովրդեան ողջամիտ մասն յանձնու բերկրեալ է այս ընտրութիւն :

15 Սորբոն-Բէն

— Խառն Ժողովն այս հիշարթի աւուր նստին մէջ, բաց յայլոց, հետեւեալ տնօրինութիւններն ըրաւ :

Վաւերացուց Գեր. Գարեգին վարդապետ Սրբանձտեանցի ընտրութիւնն յառաջնորդութեան Տրապիզոնի :

Եզիպտոսի ընդհանուր Ժողովն առաջնորդ ընտրած լինելով Ս. Երուսաղէմի միաբան եւ այժմ Ռուսիա նուիրակ Գեր. Տ. Մամբրէ վարդապետ Մարկոսեանն, սոյն ընտրութիւնն եւս վաւերացուց :


Գեր. Հմայեակ Եպիսկ. Իմամբսեան իսպառ հրաժարական տուած լինելով Երիզայի առաջնորդութենէն, որոշուեցաւ այս մասին ըստ օրինի տեղւոյն գաւառական Ժողովոյ կարծիքն առնուլ :

— Տիգրանակերտի առաջնորդական Տեղապահի պաշտօնին վաւերացման գիրը Բ. Գունէն Պատրիարքարան հասած է :

Ինչպէս կը յիշուի, Գեր. Արապետ վարդապետ Բաղրատունի կոչուած էր այդ պաշտօնին եւ Ս. Պատրիարք Հայրը բանի մը օր առաջ Թագրիր մ'ուղղելով առ Բ. Գունըն, վաւերացումը խնդրած էր :

ԼՈՅԹԸՆ ԵՒ ՉԻՄՆԵԼ **ՄԹԵՐԱՆՈՅ** **ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ** **ԳՈՐԾԵԱՅ**

ՔԻՒՐՔՅԻ ԳԱՐՈՒԹՅՈՒՆ, ՂԱԼԱԹԻԱ



«ՕՐԻԱՆ» Մականուանեալ հնձող մեքենայն երկու ձիով կը քաշուի և կը կշռէ 500 օխա :

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը երաշխաւորեալ է : Գնողն երբ գոյ չիլինի, կրնայ ետ առնուլ իւր ստակն :

502

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՊԱՏԿԵՐԱԶՈՐԴ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ Քաղաքական, բնական և ուսումնական, ի պէտս վարժարանաց . — Գրեց Ա. Մ. Գարագաշեան (Բ. տպագրութիւն) գին 10 զրուշ :

ՏԱՃԿ-ԱՆԳՂ. ԲԱՌԱՐԱՆ. Պոյաճեան տպարանէն հրատարակեալ ընշարձակ բառարան : Երկու հատորներն հրատարակուած է : Մէն մի հատորի գինն է 50 զրուշ :

ՊԱՐՈՆ ՇՈՒՊԼԱՆ, խիստ ծիծաղաշարժ ու զբօսեցուցիչ վէպ Շարլ Բօլ տը Գոքի, սահուն ոճով թարգմանեալ ի հայ : Ա. հատորն հրատարակուած է և Բ. հատորը մամլոյ տակ : Գին 5 զրուշ :

ԹՈՒՆԱԻՈՐԻՉ ԱՂԱԿԻԸ. — Հետաքրքրաշարժ վէպ Գ. Սարրաֆեանի, Պոլսոյ կեանքէն քաղեալ : Հեղինակը կը խնդրէ մեզին ծանուցանել թէ իւր վէպի առաջին տպագրութեան մեծ մասն սպառած լինելով, չորս հատորի գինը 20 զրուշէն 10 զրուշի իջուցած է :

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, Պոյաճեան տպարանէն ի լոյս ընծայեալ մաքուր տպագրութեամբ և աշխարհագրական բազմաթիւ քարտէսներով ու պատկերներով : Գին 25 զրուշ :

ԱՐԿԱԾՔ ԱՆՐԱՍԿԱՆՔ ՄԻՆԵԽՆԱՅԱՌԱՋՐՈՐՈՒՆՎԷՊ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ, ԹԱՐԳՄ. Կ. Ս. ԻԼԹԻՆՃԵԱՆ. — Գին 5 զրուշ :

ՔՐԻՍՏՈՆԵՍԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ ՀԱՅԱՍՏ. Ս. ԵԿԵՂԵՅԻՈՅ. — գրեց Գարեգին վրդ. Սրուանձտեանց . — Բ. տպագրութիւն, սըրբագրեալ. (չափ առնողին 20 զեղչով) — գին 50 փարայ :

Ա. ՏԸՊԷ. — ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՔ ԾԱԾԿԵԼՈՅ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԳՈՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՅ. — Թարգմ. Ն. Ճիւղանեան. — գին 15 զրուշ :

ԼԷԹԱՅԻՖԻ ԱՍԱՐ (էլէքտրիք-առծ), բարոյական, նկարագրական, գիտական, և պատմական հատուածներ, խրատներ և մուհակներ, պայմանագրեր, նամակներ, աղերսագրեր . — յօրինեց Միհրան Աբիկեան . — գին 100 փարայ :

ՏԱՐԵՐՔ ՕՍՄ. ԼԵՋՈՒԻ. — (Բ. տպագրութիւն) . — (հեղ. Նոյն) կը սլաքունակէ օսմ. պարսկ. և արաբերէն լեզուաց կանոններն մասնաւոր դրութեամբ մը . — գին 6 զրուշ :

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ (մտաւոր և գրաւոր . Ա. և Բ. տարիներու համար) . աշխատասիրեաց Յ. Գ. Փալագաշեան . — Գ. տպագրութիւն, բարեփոխեալ և յաւելեալ . — գին 5 զրուշ :


ՈՒԼՆԻԱ ԿԱՄ ՁԷՅԹՈՒՆ. — Լեռնային աւան ի կիլիկիա . Նկարագիր տեղական, կենսագրական, բանասիրական և լեզուաբանական : — Ձէյթունի վրայ մանրամասն նորէն գրուած սոյն ընտիր գրքի պահուածներն արկածէ մը փառաւած և միայն սակաւաթիւ օրինակներ մնացած են քանի մը գլխաւոր գրավաճառաց քով — գին 10 զրուշ : (Բ. տպագրութիւն չսլաք լինի մասնաւոր պատճառով) :

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱԿ ԳԱԻԱՌՈՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ. — Տեղեկութիւնք Սարէն և Ձորէն, Հնէն և Նորէն, պիտանի գիտոց (Մ. Կ. Միքայիլեանի) : — Ա. մաս 3 զրուշ . Բ. մասը 10 զրուշ : Գ. մասն ընդ մամլով :

ՍԷՅՏԵԼ և ՆԱՒՄԱՆ

ՏՐԷՋՏԱ. [ՍԱ.ԲԱՌՆԻԱ]

Ներդրողի մէջ կա-
րի մեքենայ չինող
ամենամեծ գործա-
րանն :




Գործարանատեսչք
«Օրէժինա Սափահիւ»
Բէժին» կոչուած հրու-
չակաւոր ձեռքի մե-
քենային :

ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ

Ընտանեաց համար
ձեռքով և ոտքով բա-
նող մեքենայք :

ՆԱՒՄԱՆ մեքենայն B

Մոտիվներու և
դերձակներու համար
մեքենայք :



Այս մեքենայն իւր թելին տակ
այնկէկ տեղ մ'ունի, ինչպէս նաեւ
ամեն տեսակ կարերու համար նո-
րանոր գործիքներ, և շատ դիւ-
րութեամբ լաւ

ՕՂԱԿ

չինելու համար մասնաւոր գոր-
ծիք մը :

Այդ մեքենային համար աշ-
խարհիս ամեն կողմ արտօնու-
թիւն առնուած է :

Ծանօթ. — Այդ ԿԱՏԱՐՆԱԹԻՒՆԵՆ Զտեւած՝ կարի մեքենայ մի՛ գնէք :

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆԵՐ



ԳՈՐԾԱԹՈՒԹԻՒՆԵՆ ԶՐԻ ԿՈՒՍՈՒՅՈՒԻ

Ընտանեաց համար օղակի գործիք ղՃ 75
Գերձակաց » » » » 125

Թուրքիոյ և Պուլկարիոյ համար
գործակալ և մթերանոցապետ
ԷՄ. Ժ. ՄԷՐՃԱՆՕՅ

Կ. Պոլիս, Հաճօքուլ խան, Թիւ 47

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆԵՐ



Ամեն տեսակէն 1500 մեքենայ միշտ պատրաստ կը գտնուին :

508

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ